

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Սահմանադրական Դատարանը Տագնապի Առջեւ

Նախկին իշխող ուժի վերջին «ամրոցը» նկատուող Հայաստանի Սահմանադրական Դատարանը կը գտնուի տագնապի առջեւ: Դատարանի նորընտիր անդամ Վահե Գրիգորեան Յունիս 20-ին Ազգային ժողովէն ներս իր երդումը կատարելէ ետք անակնկալի բերաւ բոլորին՝ յայտարարելով որ Սահմանադրական Դատարան կ'երթայ ստանձնելու այդ մարմին նախագահութիւնը: Գրիգորեան բացատրելով իր այս մտտեցումը առարկեց որ, հին Սահմանադրութեամբ ընտրուածները կը նկատուին անդամներ, իսկ 2015 թուականին ընդունուած նոր Սահմանադրութեամբ Դատարանը բաղկացած պէտք է ըլլայ դատաւորներէ եւ միայն դատաւորները իրաւունք ունին որոշումներ կայացնելու եւ քանի որ Սահմանադրական Դատարանի 9 անդամներէն երկուքը միայն ընտրուած են նոր Սահմանադրութեան ընդունումէն ետք ու անոնցմէ մին արձակուրդի մէջ է՝ ինք կը նկատուի Սահմանադրական Դատարանի նախագահ: Այսօրուայ դրութեամբ Դատարանի նախագահութիւնը կը վարէ Հանրապետական իշխանութիւններու կարկառուն դէմքերէն եւ 2015 թուականին ընդունուած Սահմանադրութեան գլխաւոր հեղինակ՝ Հրայր Թովմասեան:

Այժմ բնականաբար կ'ընթանան հրապարակային վեճեր ու կը հնչեն տարբեր մեկնաբանութիւններ սահմանազէտներու ու իրաւազէտներու միջեւ: Սահմանադրական դրոյթներու շուրջ տարբեր մեկնաբանութիւնները նորութիւն չեն եւ յաճախ կը պատահին տարբեր երկիրներու մէջ, յատկապէս հոն ուր, Սահմանադրութիւնը կ'ենթարկուի յաճախակի փոփոխութիւններու, ինչպէս եղած է Հայաստանի պարագային:

2015 թուականին Սերժ Սարգսեան նախաձեռնեց նոր Սահմանադրութեան պատրաստութեան, որպէսզի կարողանայ շարունակել ղեկավարել երկիրը իր երկրորդ շրջանի աւարտէն ետք, այս անգամ որպէս վարչապետ: Սակայն, «տան հաշիւը, շուկայի հաշիւին չբռնեց» ու բոլոր այդ ծրագիրները տապալեցան, 2018 թուականի Ապրիլ-Մայիս ամիսներուն տեղի ունեցած ժողովրդային յեղափոխութեան շնորհիւ: Հրայր Թովմասեան նոր սահմանադրութիւնը պատրաստելու պահուն չէր մտքացած ապահովագրել նաեւ իր պաշտօնը, ամրագրելով որ Սահմանադրական դատարանի անդամները կը շարունակեն մնալ իրենց պաշտօններուն վրայ: Սակայն, ներկայիս հին ու նոր սահմանադրութիւններուն միջեւ ի յայտ կու գան որոշ հակասութիւններ, որոնք ալ պատճառ կը դառնան այսօր-


## ՄԱԿ-ը Հարցապնդում Յղած է Թուրքիոյ Կողմէ Տեղահանուած Հայերու ճակատագրի Մասին



Միաւորուած ազգերու կազմակերպութեան (ՄԱԿ) Բռնի կամ հարկադրաբար անհետացած անձանց հարցերով աշխատանքային խումբը, ՄԱԿ-ի Կարծիքի եւ արտայայտութեան ազատութեան աջակցութեան եւ պաշտպանութեան հարցերով յատուկ զեկուցողը եւ ՄԱԿ-ի ճշմարտութեան, արդարադատութեան, փոխհատուցման խրախուսման եւ չկրկնուելու երաշխիքներու հարցերով յատուկ զեկուցողը իրենց մանտաթներու շրջանակէն ներս Թուրքիոյ Հանրապետութեան կառավարութեան յղած են համատեղ հարցապնդում: Նշուած փաստաթուղթին մէջ շարադրուած պնդումները կը վերագրուին Թուրքիոյ՝ հայկական փոքրամասնութեան վրայ 1915-1923թթ. ներազդած ողբերգական

իրադարձութիւններուն եւ բնակչութեան նկատմամբ առաջացած հետեւանքներու առումով: Հարցապնդումը մտահոգութիւն կը յայտնէ թրքական պետութեան ժխտողական դիրքորոշման, որոշ արտայայտութիւններու վերաբերեալ կարծիք ունենալու եւ արտայայտելու ազատութիւնը սահմանափակող օրէնսդրութեան, ինչպէս նաեւ զանգուածային տառապանքներու, դաժան վերաբերմունքի ու մարդոց մահուան յանգեցուցած 1915-1923թթ. հայերու բռնի տեղահանութեան առնչութեամբ ճշմարտութեան հաստատման եւ արդարադատութեան ապահովման հարցով առաջընթացի բացակայութեան կապակցութեամբ:

## Գոնկրէսական Ֆրենք Փալոն Ներկայացուցած է ԱՄՆ-Հայաստան «Ռազմավարական Գործընկերութիւնը» Ողջունող Բանաձեւ



Գոնկրէսական Ֆրենք Փալոն ներկայացուցած է ԱՄՆ-Հայաստան «Ռազմավարական գործընկերութիւնը» ողջունող բանաձեւ: Բանաձեւը կոչ կ'ընէ բարձր մակարդակի այցելութիւններ, պաշտպանութեան բնագաւառին մէջ կատարել քննարկումներ, զարկ տալ առեւտուրին ու ներդրումներուն: Այս մասին կը գրէ «Ամերիկայի Ձայնը»:

Գոնկրէսի հայկական հարցերով յանձնախումբի հիմնադիր ու համանախագահ Փալոնի ներկայացուցած բանաձեւը կ'ողջունէ Հայաստանի մէջ 2018 թուականին խաղաղ քաղաքական անցումը, ԱՄՆ-Հայաստան «ռազմավարական

## Ամբաստանեալ Ռոպերթ Քոչարեան Վերադարձաւ Կալանավայր

Յունիս 25-ին, Հայաստանի վերաքննիչ Դատարանը որոշեց բաւարարել կրկին կալանադրել սահմանադրական կարգի տապալման մէջ մեղադրուող Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանը: Վերաքննիչ դատարանը որոշեց՝ դատախազ Պետրոսեանի եւ տուժողի ներկայացուցիչ փաստաբան Սաֆարեանի վերաքննիչ բողոքները բաւարարել, բեկանելով Երեւան քաղաքի ընդհանուր իրաւասութեան առաջին ատենի դատարանի Մայիսի 18-ի որոշումը ու Ռոպերթ Քոչարեանի նկատմամբ որպէս խափանման միջոց ընտրուած անձնական երաշխաւորութիւնը վերացնել: Դատարանը նաեւ բեկանած է Սահմանադրական դատարանի դիմելու եւ գործի վարույթը կասեցնելու առաջին ատենի որոշումը եւ համապատասխան քրէական գործը ուղարկած նոյն դատարան՝ նոր քննութեան: Որոշումը ենթակալ է բողո-

քարկման այն ստանալու պահէն 15-օրեայ ժամկէտի ընթացքին: Քոչարեանն ու անոր պաշտպանական խումբը նիստին ներկայ չեն եղած: Աւելի վաղ պաշտպանական խումբը յայտարարութիւն տարածած էր՝ մանրամասնելով. - «Վերաքննիչ քրէական դատարանը թույլ չի տուել ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի պաշտպաններին ներկայացնել իրենց դիրքորոշումները եւ, կոպտօրէն ոտնահարելով մրցակցային դատավարութեան սկզբունքը, հեռացել է խորհրդակցական սենեակ՝ դատական աթիւ կայացնելու, յայտարարում ենք, որ ոչ նախագահ Քոչարեանը, ոչ Պաշտպանական խմբի անդամները, ի նշան բողոքի, չեն մասնակցելու այսօր կայանալիք նիստին»: Դատաւոր Արմէն Դանիէլեանի կողմէ որոշումի հրապարակումէն ետք Ռոպերթ Քոչարեան ինքնակամ ներկայացաւ իրաւապահ մարմիններուն ու վերադարձաւ բանտ:

## «Փաշինեանի Որդին Կը Ծառայէ Արցախի Մէջ, Բան մը, որ Քոչարեանի Երկու Ձաւակներէն Ոչ Մէկը Ըրած է»:

### Վլատիմիր Կարապետեան

Հայաստանի Հանրապետութեան վարչապետի մամուլի խօսնակ Վլատիմիր Կարապետեանը անդրադարձած է 5-րդ ալիքին տուած հարցազրոյցի ժամանակ ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի պնդումներուն:

«Արմէնափրես»-ի հետ զրոյցի ժամանակ, անդրադառնալով հարցին, թէ ինչպէ՞ս կը մեկնաբանէ ՀՀ երկրորդ նախագահի պնդումները հարցազրոյցի ընթացքին, ՀՀ վարչապետի մամուլի խօսնակը ընդգծած է, որ Ռոպերթ Քոչարեանը նախ պէտք է հանրութեան ընդարձակ պարզաբանումներ տար, թէ ինչպէ՞ս իր ընտանիքը դարձած է միլիոնատէր եւ ինչպէ՞ս այդ

# ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Հարեւանների ճգնաժամը. Ինչ է Տեղի Ունենում Հայաստանի Շուրջ

### ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Հայաստանի հարեւան իրա- նում եւ վրաստանում ֆորա-մաժո- րային իրավիճակներ են: Իրանն ու ԱՄՆ-ն պատերազմի շեմին են, վրաստանը ներքաղաքական ճգնա- ժամի մէջ է:

Իրանին ռազմական հարուա- ծը չեղարկելու որոշումից յետոյ ԱՄՆ-ն խնդրել է ՄԱԿ Անվտան- գութեան խորհրդի արտահերթ նիստ հրահրել: «Իրանի շուրջ վերջին իրադարձութիւնների» վե- րաբերել խորհրդակցութիւնը տե- դի կ'ունենայ փակ դռների հետե- ւում, յայտնել են դիւանագիտա- կան աղբիւրները:

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Թեհրանի կողմից ամե- րիկեան անօդաչու սարքի խոցու- մից յետոյ հրահանգել էր ռազմա- կան հարուած հասցնել Իրանին, բայց գործողութիւնից 10 րոպէ առաջ չեղեալ է արել հրամանը: Թրամփը դա բացատրել է նրանով, որ հարուածի հետեւանքով մօտ 150 մարդ կը զոհուէր, որն անհա- մաչափ կը լինէր:

Դժուար է ենթադրել, թէ ինչ էլք կ'ունենար ԱՄՆ հարուածը Իրանին: Մեր հարեւանը, փաստա- ցի, ամէն պահի կարող է ռազմական գործողութիւնների թատերաբեմ դառնալ:

Իրավիճակն աւելի լաւ չէ վրաստանում, որտեղ բողոքի ակցի- աներ են տեղի ունենում: Մոսկ-

ուան ռուսաստանցիներին խոր- հուրդ չի տալիս մեկնել վրաստան:

Ռուսաստանի նախագահ Վլա- դիմիր Պուտինը հրամանագիր է ստորագրել, որն արգելում է աւի- աընկերութիւններին Յուլիսի 8- րդ Ռուսաստանից վրաստան չվերթներ իրականացնել: Բացի այդ, Պուտինը կառավարութեանը յանձնարարել է վրաստանից վե- րադարձնել ՌԴ քաղաքացիներին ու նրանց ուղեբեռը:

Թուրքիայում եւ Ատրպէյջա- նում եւս բարդ վիճակ է: Թուրքիա- յին սպառնում են ԱՄՆ պատժամի- ջոցները եւ վտարում ՆԱՏՕ-ից, եթէ Ռուսաստանի հետ C-400-ի գործար- քը կայանայ: Եւրամիութիւնը Թուրք- իային սպառնում է պատժամիջոց- ներով, եթէ չդադարեցնի նաւթի որոնման աշխատանքները Կիպրոսի ջրերում: Յունիսի 23-ին կոնս- տանդնուպոլսում քաղաքապետի նոր ընտրութիւններին էրտողանը կրկին պարտութիւն կրեց:

Ատրպէյջանի նախագահն անս- պասելի փոխել է ուժային կառույց- ների ղեկավարներին: Շշուկներ են պտտում նոր դաւադրութիւնների մասին: Էրտողանը զանգահարել է Ալիեւին: Պաշտօնական հաղորդա- րութիւնում չի նշում, թէ նրանք ինչ են խօսել:

Տարածաշրջանում լարումը մեծանում է եւ Հայաստանը պէտք է պատրաստ լինի իրադարձու- թիւնների ցանկացած զարգացման: «ԼՐԱԳԻՐ»

## Ուլքեր են Պայքարում Անկախ Դատարանների Դէմ եւ Ինչու է Դիմադրութիւնը Կատաղի

Սահմանադրական դատարա- նի նախագահի, դատաւորների վե- թինգի, անցումային արդարադա- տութեան եւ ընդհանրապէս՝ դատա- իրաւական համակարգի բարեփո- խումների շուրջ բարձրացուած աղ- մուկը ոչ միայն չի դադարում, այլեւ միտումնաւոր կերպով խեղաթիւր- ւում է գործընթացի բուն նպատակը: Բոլոր նրանք, ովքեր արդարադա- տութիւնից վախենալու լուրջ հիմ- քեր ունեն, հարցն այնպէս են ներ- կայացնում, թէ վարչապետ Փաշին- եանն ուզում է ամէն գնով լիակա- տար վերահսկողութիւն սահմանել նաեւ դատական համակարգի եւ Սահմանադրական դատարանի վրայ, «իրենով անել» այդ իբր ներկա- յում անկախ կառույցները եւ այդ- պիսով երկրում հաստատել իր մի- անձնեայ իշխանութիւնը:

Այս գործընթացների օրինա- կանութեան հարցերը թողնենք իրա- ւաբաններին (տեսակէտները տար- բեր են, եւ մասնագիտական լուրջ վերլուծութիւնների կարիք կայ) եւ անդրադառնանք հարցի քաղաքա- կան կողմին: Իսկապէս՝ կառավա- րութեան եւ իշխող քաղաքական ուժի նպատակն «անկախ» դատա- րանները վերահսկելի դարձնելն է: Եւ արդեօ՞ք անկախ են այդ դատա- րանները: Օրինակ՝ կը գտնուի՞ Հայաստանում մէկը, ով լրջօրէն կը հաւատայ, որ ՄԴ նախագահ Հրայր Թովմասեանը քաղաքականապէս չէ- գոք է եւ կուսակցական կողմնորո- շում չունի: Այն նոյն Հրայր Թով- մասեանը, ով Սերժ Սարգսեանի կառավարութեան կազմում արդա- րադատութեան նախարար է եղել, իսկ յետոյ նրա պատուէրով այնպի- սի սահմանադրական փոփոխու- թիւններ է իրականացրել, որ «չէ- ֆը» կարողանայ նախագահական երկրորդ ժամկէտի աւարտից յետոյ էլ մնալ պետութեան առաջին դէմ- քը: Կամ գուցէ Սահմանադրական դատարանն է անկախ կառույց եղել: Այն նոյն Սահմանադրական դատա- րանը, որն ամէն կեղծուած ընտրու- թիւնից յետոյ իշխանահանոյ ձեւա- կերպումներ էր յօրինում ու լեզի- տիմացնում ընտրութիւնները, իսկ եթէ բողոքողների թիւը մեծ էր լինում՝ ինչ-որ ձեւով լրջում էր ու իշխանութիւններին ժամանակ շա- հելու հնարաւորութիւն տալիս:

Դատարանների մասին ընդ- հանրապէս չենք խօսում՝ երկար տարիներ այդ կառույցներին հնա- րաւորութիւն էր տրուած «մանր- մունր գործերով» փող աշխատել, իսկ աւելի ծանրակշիւ գործերով որոշումները հիմնականում կա- յացուած էին ըստ վերելից իջեց- ուած հրահանգների: Սա չի նշանա- կում, թէ ազնիւ դատաւորներ ընդ- հանրապէս չկային, բայց համա- կարգն էր այդպիսին:

Պարզ ասած՝ ինդիքը ոչ թէ «անկախ» դատարաններն իշխա- նութիւններից կախուածութեան մէջ դնելն է, այլ նախկին իշխանութիւն- ներից կախուածութեան մէջ գտնուող դատարաններն իրապէս անկախ դարձնելը: Ու հասկանալի է, որ նախկինները պիտի կատաղի դի- մադրութիւն ցոյց տան: Որովհետեւ նախ՝ կորցնելու են ազդեցութիւնն այսօր գործող դատարանների վրայ, եւ երկրորդ՝ (սա նրանց համար ամենահաւանական է), անկախ դատա- րանները գործելու են բացառապէս օրօնքի սահմաններում, իսկ նախ-

կինների գործունէութեան բազմա- թիւ դրուագներ կամ վաղեմութեան ժամկէտ չունեն, կամ նախատեսում են պետութեանը հասցուած վնասի ամբողջական փոխհատուցում:

Ինչ վերաբերում է վեթինգին, ապա դա ոչ թէ նպատակ է, այլ ընդամէնը գործիք եւ ինչպէս ցան- կացած այլ գործիք՝ կարող է օգտա- գործուել ե՛ւ բարի ե՛ւ չար նպա- տակներով: Բայց «իսկ դատաւոր- նե՞րն ովքեր են» հարցը արդիական է բոլոր ժամանակներում: Վերջին հաշուով՝ մեր դատական համակար- գի միակ պրոբլեմն այն չէ, որ դատաւորները կաշկանդուած են անցեալից եկած հազարամի կապե- րով, հիմնական պրոբլեմն այն է, որ դատարանների եւ դատաւորների նկատմամբ հասարակութեան վստա- հութիւնը գրոյցական է: Իսկ այդ վստահութիւնը վերականգնելու լա- ւագոյն ձեւերից մէկը վեթինգն (Ստուգում Մ.) է: Մարդիկ պիտի իմանան, թէ ովքեր են արդարադա- տութիւն իրականացնողները, եւ դատարանների որոշումները պիտի ընկալուեն որպէս անառարկելի ճշմարտութիւններ:

Հակառակ դէպքում «ճիշտն ու սխալը» կ'որոշուի բարկադա- ւորուած փողոցներում կամ աւտո- մատների կրակահերթերի տակ, իսկ դա պետականութեան կորստի ամենակարճ ճանապարհն է: Մեծ հաշուով՝ իշխանութիւններն այսօր հենց դատարաններն ունենալու հարցն են լուծում: Իսկ դիմադրող- ները դրա դէմ պայքարում են՝ իբր իրաւական հարթութիւնում, «չդա- տարանների» միջոցով:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

## Սահմանադրական «Ռումբը»՝ Շտապելու Արդիւնքը

### ՊԱՐԳԵԻ ԱՊՐԵՍԵԱՆ

Այն պահից սկսած, երբ Սահ- մանադրական դատարանի նորըն- տիր դատաւոր Վահէ Գրիգորեանը երէկ ԱԺ-ում երդման տեքստն ար- տաբերելիս յայտարարեց, որ ինքը, փաստօրէն, ՄԴ թուով երկրորդ ընտրուած դատաւորն է, եւ քանի որ միւս դատաւորը գտնուում է արձա- կուրդում, ինքը ստանձնում է նաեւ ՄԴ նախագահի լիազօրութիւնները, նախկին իշխանականների եւ նրանց կից վերլուծաբանների մօտ մի իս- կական հիստորիա սկսուեց:

Ընդ որում, նրանց մեծ մասը սահմանացնում է իրաւական հիմնա- ւորումների կողքով, այն է՝ իրենց իսկ գրած Սահմանադրութեամբ է այդպէս ստացուել, որ նախորդ Սահմանադրու- թեամբ ընտրուած ՄԴ անդամները աւտոմատ չեն դարձել դատաւոր, այն դէպքում, երբ իրենց գրած նոր Սահ- մանադրութեամբ ՄԴ-ն կազմաւոր- ւում է բացառապէս դատաւորներից:

Ընդ որում, զաւեշտն այն է, որ առաջին «տուժողը» սահմանադ- րական փոփոխութիւններից յետոյ ՄԴ նախագահ դարձած՝ այդ նոր Սահմանադրութեան համահեղինակ- ներից մէկն է՝ Հրայր Թովմասեանը:

Մարդն ինքը յայտնուել է սե- փական ձեռքով գրուած տեքստի ձիրաններում, իր իսկ հեղինակած տեքստը ռումբ է դարձել իր իսկ սահմանադրական ավտոմատի տակ:

Բայց ինչո՞ւ է այդպէս ստաց- ուել: Մի՞թէ այն պատճառով, որ հեղիակները իրաւական առումով գրագէտ չէին: Կարծում ենք՝ ոչ, իրական պատճառը շտապողակա- նութիւնն էր:

Բոլորս էլ դեռ չիշում ենք, թէ ինչպիսի շտապողականութեամբ նախկին իշխանութիւնները նախա- ձեռնեցին սահմանադրական փոփո- խութիւններ, եւ չնայած Սերժ Սարգսեանը յայտարարում էր, թէ կիսանախագահական համակարգից դէպի խորհրդարանական կառա- վարման համակարգ անցնող փոփո- խութիւնները իր սրտով չեն, ակն- յայտ էր, որ այդ փոփոխութիւնները մէկ նպատակ ունէին. այն է՝ հնարա- ւորինս սեղմ ժամկէտներում արագ կատարել այնպիսի օրէնսդրական փոփոխութիւններ, իրաւական առումով նախապատրաստել քաղա- քական դաշտը այն բանին, որ նախագահական ժամկէտի աւարտին Սերժ Սարգսեանը ոչ թէ թողնի իշխանութիւնն ու տուն գնայ, այլ սահուն անցում կատարի դէպի իշխանութեան կառավարման ղեկը՝ թէկուց եւ այլ պաշտօնում:

Այսինքն, նախկինների ամբողջ իրաւական միտքը միտուած եւ ուղղուած է եղել հենց այդ նպատա- կին, ու հենց այդ պատճառով էլ՝ այդ իրականում սող ժամկէտում, ըստ հուժեան, բաւարար ժամանակ չեն ունեցել՝ այլ մարմիններին վերաբե- րող դրոյթները մանրագնին գրելու եւ ձեւակերպելու համար:

Չենց այդ պատճառով էլ այսօր ունենք այն, ինչ ունենք:

Պարզապէս զաւեշտն այն է, որ այդ փոփոխութիւնները հեղինակած ու Սերժ Սարգսեանի իշխանավարու- թիւնը երկարաձգելու համար ջանք չխնայած անձը, մէկ էլ ու յանկարծ պարզուեց, որ իր գրած տեքստից փլուզում են հենց իր պլանները: «Ի ԼՈՒՐ»



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՎԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Երջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՅԷ ԱԶՎՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ՂԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հայաստանը Պետք է Ըլլայ Բռնութենէ Ձերծ Երկիր. Փաշինեան



Վարչապետ Փաշինեան ելոյթ կ'ունենայ ներքին գործերու կազմաւորման 27-ամեակի միջոցառման ժամանակ

Հայաստանը պէտք է ըլլայ բռնութենէ զերծ երկիր, ուր տեղ չունին բռնութիւններով հարցեր լուծելու որեւէ մտայնութիւն, որեւէ փորձ, որեւէ քարոզչութիւն, յայտարարած է Նիկոլ Փաշինեանը՝ Ոստիկանութեան ներքին գործերու կազմաւորման 27-ամեակի միջոցառման ժամանակ:

«Հայաստանի Հանրապետութիւնում սիրող եւ համերաշխութեան միջոցով ձեւաւորելու մեր անմնացորդ ձգտումը ոմանք կարծես փորձ են անում մեկնաբանել որպէս թուլութիւն», - ընդգծած է Փաշինեանը:

Վարչապետը վստահեցուցած է՝ կառավարութիւնը երկչոտութեան որեւէ դրսեւորում կամ կամքի պակաս չունենար՝ սահմանադրական կարգը, քաղաքացիներու իրաւունքները, ազատութիւնները, Հայաստանի ինքնիշխանութիւնը, ժողովրդավարութիւնը պաշտպանելու գործին մէջ:

«Մեր կամքը չի սասանուի, եւ մեր ձեռքը չի դողայ բոլոր նրանց հետ յարաբերութիւններում, ովքեր կը փորձեն Հայաստանի Հանրապետութիւնում վերածնել բռնութեան քարոզչութիւնը եւ բռնութեան գործելակերպը: Մեր ձեռքը չի դողայ, մեր կամքը չի սասանուի», - նշած է Փաշինեանը:

Յունիս 6-ին ալ վարչապետը կառավարութեան նիստի ընթացքին յայտարարած՝ ոչ թէ թաւշեայ, այլ երկաթեայ հակահարուած պիտի տրուի բռնութեան քարոզչութեանը:

Ոստիկանապետն ալ արձագանգեց վարչապետի յայտարարութեան, վստահեցուց՝ ոստիկանութեան պատասխանը իրաւախախտներուն շատ կոշտ պիտի ըլլայ:

Օսիպեանը ըսած է՝ եթէ նախապէս ոստիկանութիւնը կը հանդուրժէր, ապա մօտ մէկ ամիս է՝ վերաբերմունքը փոխուած է օրինազանցներու նկատմամբ: - «Վստահեցնում եմ՝ այսօր արդէն եւ շուրջ մէկ ամիս տեւական կը լինի եւ ոստիկանութիւնը այլեւս հանդուրժող չի», - ընդգծած է ոստիկանապետը:

Ոստիկանապետը, ի դէպ, այսօր յեղափոխութենէն ետք ոստիկանութեան թիւ մէկ ձեռքբերումը համարած է ոստիկանութեան գործերու մարտական հերթապահութեան անցնելը: Բացատրած է՝ մինչ այդ ալ ներքին գործերը սահմանագիծին ծառայութիւն կ'իրականացնէին, սակայն այն կարճ կը տեւէր:


«Մեր դիրքերում պաշտպանութեան նախարարութեան՝ զինուած ուժերու ներկայացուցիչներ չկան, առաջներում կային, բայց երբ որ տղաները հմտացան եւ դարձան արդէն այդ տարածքների տէր ու տիրակալը, էսպէս ասած, շուրջ մէկ տարի է մենք ինքնուրոյն պաշտպանում ենք պետական սահմանը», - ըսած է Օսիպեանը:

Վահէ Գրիգորեանի Յայտարարութիւնը Սահմանադրական Դատարանի Նախագահի Պարտականութիւնները Ստանձնելու Մասին Անակնկալ Եր

ՀՀ Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցութեան ղեկավար Լիլիթ Մակունցի համար Վահէ Գրիգորեանի՝ Սահմանադրական դատարանի նախագահի լիազորութիւններն ու պարտականութիւնները ստանձնելու մասին յայտարարութիւնը անակնկալ եղած է: «Արմէնփրես»-ի հարցրոգմամբ՝ Մակունցը այդ մասին ըսած է ԱԺ-ի մէջ լրագրողներու հետ զրոյցի ժամանակ՝ անդրադառնալով լրագրողի հարցին:

«Ինձ համար անակնկալ էր Վահէ Գրիգորեանի յայտարարութեան՝ Սահմանադրական դատարանի նախագահի պարտականութիւնները ստանձնելու հատուածը», - ըսած է Մակունցը:

Դիտարկման, թէ Վահէ Գրիգորեանը իր թեկնածութեան քննարկման ժամանակ նախագահ



ՀՀ Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցութեան ղեկավար Լիլիթ Մակունց

դառնալու մտադրութեան մասին չէ բարձրաձայնած, ինչպէ՞ս կը վերաբերի այդ հարցին, Մակունցը ըսած է. «Իւրաքանչիւր թեկնածուի իրա-

Ըստ Գլխաւոր Դատախազի Քոչարեանի 26-ամեայ Որդիի Հաշիւին 18 Միլիոն Տոլար Փոխանցուած Էր

«Ես շատ խորհրդանշական եմ համարում, որ այդպիսի յայտարարութիւն է անում այսօր մեղադրեալ, իսկ մեղադրուող յանցանքների պահին ՀՀ նախագահ հանդիսացած անձը», - դատարանէն ներս լրագրողներուն ըսած է գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեանը՝ անդրադառնալով նախորդ դատական նիստին Ռոպերթ Քոչարեանի այն յայտարարութեան, թէ իր գործը կարուած է, եւ իւրաքանչիւրը իր ըրածի համար պատասխան պիտի տայ:

Դատախազը շարունակած է. «Ես կարծում եմ, որ սա արդէն իսկ վկայում է բաւական լուրջ արդիւնքների մասին, եւ ժողովրդական այն անվիճելի խօսքի մասին, որ այդ, ամէն մարդ իր արածի համար պատասխան է տալու: Այդ արտայայտութիւնը, որ իւրաքանչիւրը պատասխան է տալու, իրենք մոռացել են, որ վերաբերում է յանցանք կամ իրաւախախտում կատարելու դէպքում պատասխան տալուն: Որեւէ պաշտօնեայ, ով բարեխղճօրէն իր գործն է կատարել, նա անհանգստանալու որեւէ խնդիր չունի»:

Արթուր Դաւթեանը ըսած է, որ իրենք յոյս ունին, որ գործը քննող դատաւորը այդ բարոյական ու հոգեբանական ճնշումներուն չենթարկուիր:

Դատախազը նաեւ աւելցուցած է, որ պաշտպանական կողմէն գործի քննութիւնը արհեստականօրէն ձգձգելու միտում կը տեսնեն իրենք: «Եւ եթէ այս միտումն ունենայ օրէնքով ընձեռնուած, պայմանական ասած, հնարաւորութիւնների պարբերական գործադրումներ, ես խնդրեցի, որ դատարանն արձանագրի դա անհրաժեշտ պահին՝ դիտարկելով դա որպէս իրաւունքներից օգտուելու անբարեխիղճ դրսեւորում», - աւելցուցած է ան:

Գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեանը Վերաքննիչ քրէական



Հայաստանի գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեան

դատարանէն ներս Ռոպերթ Քոչարեանի եւ միւսներու գործով դատական նիստի ընթացքին, անդրադառնալով Քոչարեանին կաշառքի դրուագով ներկայացուած մեղադրանքին, յայտարարած է, որ այն ժամանակ Քոչարեանի 26-ամեայ որդիի հաշիւին 18 միլիոն տոլար փոխանցուած է:

Քոչարեանի որդին՝ Լեւոն Քոչարեանը դատական նիստէն ետք լրագրողներու հարցին ի պատասխան ըսած է, որ խօսքը իր եղբոր մասին է, քանի որ 2007 թուականին ան եղած է 27 տարեկան:

«Ոչ թէ գումար է փոխանցուել, այլ հաշուի շարժի մասին էր խօսքը: Ես չնորհակալ եմ պարոն Գլխաւոր դատախազին, որ փաստօրէն փարատեց այդ միլիոնաւոր տոլարների մասին կարծիքները եւ խօսում է դրանից շատ ցածր գումարի մասին: Ան դա ասաց կաշառքի դրուագի հետ կապուած: Ասաց՝ այ այս տարիներին իր մօտ շարժ է եղել: Ասում են՝ այս կինը՝ Սիլվա Համբարձումեանը նման բան յայտարարեց, այստեղ էլ այսքան գումար կայ: Բայց ոչ մի կերպ դրանց կապը չկայ, ոչ էլ նման ցուցմունք կայ», - ըսած է Լեւոն Քոչարեան:

Շարք մը Նախկին Պաշտօնեաներ Տարիներով Գոյքահարկ Չեն Վճարած.

Շարք մը նախկին պաշտօնեաներ խուսափած են գոյքահարկէն, այդ մասին Կառավարութեան նիստէն ետք լրագրողներուն ըսած է Անշարժ գոյքի կոմիտէի նախագահ Սարգստ Պետրոսեանը: Այդ պաշտօնեաներէն միայն նշած է Սիւնիքի նախկին մարզպետ Սուրիկ Նաչատրեանի անունը՝ տեղեկացնելով, որ Երեւանի Միասնիկեանի պողոտայի վրայ գտնուող անոր առանձնատունը անգամ գրանցուած չէ չափազրութեան կոմիտէին մօտ:

«Այդպիսի պաշտօնեաները շատ են, չեմ կարող բոլորի անունները տալ: Մենք այդ տուեալները փոխանցել ենք համայնքին, եւ ես վստահ եմ, որ համայնքը դրանով կը զբաղուի», - ըսած է ան:

Անդրադառնալով Կառավարութեան մէջ քննարկուած բնակարաններու, տուներու եւ այլ անշարժ գոյքի քաղաատրային արժէ-

քի գնահատման կարգերու փոփոխութիւններու նախագիծին՝ Սարգստ Պետրոսեանը ըսած է, որ այդ գիւնը 2002 թուականէն չեն թարմացուած: Մինչդեռ անշարժ գոյքի գիւնըրը յատկապէս Երեւանի մէջ կտրուկ աճած են:

«Մենք այս նախագիծով անշարժ գոյքի գները մօտեցնելու ենք շուկայական գներին», - ըսած է ան՝ աւելցնելով, որ հիմնական թիրախը պիտի ըլլայ թանկ գոյքը: Նախագիծը հաստատուելէ եւ ուժի մէջ մտնելէ ետք անշարժ գոյքի չափազրման արժէքը պիտի բարձրանայ: Ըստ անոր՝ այսօր Երեւանի կեդրոնին մէջ 60 հազար դրամ արժողութեամբ գոյքը պիտի դառնայ 330 հազար դրամ: «Իմ կարծիքով մեր գոյքահարկը նուազագոյնը 2-3 անգամ պէտք է բարձրանայ: Սա իմ անձնական դիրքորոշումն է, ես ոչ ֆինանսիսթ եմ, ոչ էլ տնտեսական հիմքեր կան», - ըսած է ան:

ւունքն է որեւէ փուլում որոշել որեւէ մտադրութեան մասին հանրայնացնել կամ չհանրայնացնել: Վահէ Գրիգորեանը նպատակայարմար է գտել իր մտադրութիւնների մասին տեղեկացնել երդման արարողութեան ժամանակ, եւ որեւէ խնդիր այդտեղ

չեմ տեսնում: Իսկ ինչ վերաբերում է նրա յայտարարութեանը՝ ՍԴ-ի նախագահի պարտականութիւնները կատարելու վերաբերեալ, ես խնդրում եմ՝ քանի որ դա սահմանադրական դրոյթի մեկնաբանութիւն է, դիմել Վահէ Գրիգորեանին:

# ԼՈՒՐԵՐ

## Պոլթըն Լեոնային Ղարաբաղի Հետ Գործ Չունի, Անոր Կիզակետը Իրանն է. Ամերիկացի Դիւանագետ

Սպիտակ Տան ազգային անվտանգութեան հարցերով խորհրդական ձոն Պոլթընի անցեալ տարուան ուղեւորութիւնը Հարաւային Կովկաս եւ Ուաշինկթընի մէջ Ատրպէյճանի ու Հայաստանի Արտաքին գործոց նախարարներու հետ հանդիպումը կը վկայէ այն մասին, որ ԱՄՆ-ն կը սկսի տարածաշրջանին մէջ աւելի աշխուժ դեր խաղալ: Այս մասին BBC-ին ըսած է Քարնեկի հիմնադրամի աւագ գիտաշխատող Փոլ Սթրոնսքին:



Յոն Պոլթըն եւ նախարար Ջոն Կուսիս Մնացականեան Սպիտակ Տան առջեւ

«Պոլթըն կեդրոնացած է Իրանի վրայ: Երկու երկիրներուն հետ պիտի քննարկուի Իրանի հետ անոնց տնտեսական կապերու հարցը, եւ այս նկատառումը աւելի խիստ պիտի արտայայտուի, աւելի շատ, Հայաստանի հասցէին», - ըսած է Սթրոնսքին: Անկէ բացի, ԱՄՆ նախագահը Ռուսաստանի հետ համագործակցութեան ուղիներ կ'որոնէ, աւելցուցած է ան:

Անոր խօսքով՝ Լեոնային Ղարաբաղը այն ուղղութիւնն է, որով ԱՄՆ-ը աւանդաբար յաջողած է Ռուսաստանի հետ արդիւնաւէտ աշխատիլ: «Թրամփը կ'ուզէ միջազգային ասպարէզի մէջ ինչ-որ լաւ բան ընել», - կը կարծէ ան: «Ես ուրախ եմ, որ Թրամփի վարչակազմը, թեւերը սոթած սկսած է զբաղուիլ [Լեոնային Ղարաբաղի] հիմնախնդրով, որ չափէն աւելի շատ ուշադրութիւն չի գրաւեր, փոխարէնը կրնայ ծանրակշիռ արդիւնք տալ», - ըսած է Սթրոնսքին:

Օքսֆորտի համալսարանի տարածաշրջանային հարցերով փորձագէտ Լեյլա Ալիեւան համաձայն է, որ ԱՄՆ-ն սկսած է Անդրկովկասի մէջ աւելի աշխուժ դեր խաղալ: Անոր կարծիքով՝ Ուաշինկթընի դիրքորոշումը փոխուած է այն բանէն ետք, երբ նախորդ տարիներուն ամերիկեան դերը քիչ մը կրաւորական եղած է ներքին խնդիրներու եւ միջազգային այլ առաջնահերթութիւններու պատ-

ճառով:

«Պոլթըն Լեոնային Ղարաբաղի հետ գործ չունի: Անոր կիզակետը Իրանն է», - յայտարարած է Հայաստանի մէջ ԱՄՆ նախկին դեսպան իւլիանա Բարտի:

Ուաշինկթընի մէջ բանակցութիւններէն լուրջ արդիւնքներ պէտք չէ ակնկալել, կը կարծեն փորձագէտները:

«Սա այն դէպքը չէ, երբ կարելի է բեկում սպասել, ինչպէս Քի Ռեյսթի ժամանակ», - ըսած է Հայաստանի մէջ ԱՄՆ նախկին դեսպան Էլանսը:

2001-ին ամերիկեան Քի Ռեյսթ հանգստավայրին մէջ Ատրպէյճանի նախագահ Հեյտար Ալիեւը եւ Ռուսիոյ Քոչարեանը, ինչպէս երբեք, մօտ էին խաղաղութեան համաձայնագրի ստորագրման, սակայն վերջին պահին բանակցութիւնները տապալած էին:

«Այժմ օրակարգը նոյնն է. ինչպէս հաշտութիւնը եւ գինադարը աւելի կայուն դարձնել», - ըսած է Օքսֆորտի համալսարանէն Ալիեւան:

## Համաձայնագրահները Երկու Կողմերուն Կոչ Ըրած են Վերականգնելու Խաղաղութեան Նպաստող Մթնոլորտը

Ուաշինկթընի մէջ կայացած հանդիպման ժամանակ ԵԱՀԿ Մինսքի խումբի համաձայնագրահները Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարներու հետ քննարկած են խաղաղ գործընթացի առաջ մղման ուղղուած գաղափարներ, այդ շարքին՝ մարդասիրական ոլորտի մէջ, ըսուած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան հաղորդագրութեան մէջ:

Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար էմար Ամենագորովը հանդիպումէն ետք յայտարարած է, որ երկու կողմերու միջեւ կը պահպանուին բաւականին լուրջ տարաձայնութիւններ: Անոր խօսքով՝ բանակցային սեղանին նոյն առաջարկութիւններն են:

«15 տարի շարունակ մենք կը տեսնենք նոյն գաղափարները, խաղաղութեան նոյն ծրագիրը», - ըսած է Ատրպէյճանի արտաքին քաղաքականութեան գերատեսչութեան ղեկավարը:

Ամենապարզ խօսքով՝ կայացած են բաւականին խոր բանակցութիւններ եւ բանակցութիւնները աւելի բովանդակային դարձնե-

լու համար համաձայնագրահները յաւելեալ փաստաթուղթեր ներկայացուցած են:

«Տարաձայնութիւնները մանրամասնութիւններուն մէջ են», - աւելցուցած է Ամենագորովը՝ միեւնոյն ժամանակ նկատելով՝ ամենակարեւորը այդ մանրամասներն են:

Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարը նաեւ յայտարարած է, թէ անհրաժեշտ է դրսեւորել աւելի մեծ քաղաքական կամք:

Հանդիպումէն ետք յայտարարութեամբ հանդէս եկած է նաեւ ԵԱՀԿ Մինսքի խումբը: Միջնորդները կողմերուն կոչ ըրած են վերականգնելու խաղաղութեան նպաստող մթնոլորտը:

Համաձայնագրահները կը տեղեկացնեն, որ նախ առանձին, չետոյ ալ համատեղ հանդիպում ունեցած են նախարարներ Ջոն Կուսիսը եւ իւմար Մամետեարովի հետ:

Համաձայնագրահներու հետ իրենց գրոցներու ընթացքին արտաքին գործոց նախարարները ընդունած են գործող ուղիղ հաղորդակցութեան հնարաւորութիւնները ամբողջ ծաւալով օգտագործելու կարեւորութիւնը, որպէսզի լարուածութեան վտանգի պարագային արագ արձագանգեն:

## Մամետեարովի Պնդումները Չեն Համապատասխաներ Իրականութեան. ՀՀ ԱԳՆ Խօսնակ

Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարի պնդումները չեն համապատասխաներ իրականութեան, մեկնաբանելով Ուաշինկթընի մէջ կայացած խորհրդակցութիւններու վերաբերեալ էմար Մամետեարովի վերջին յայտարարութիւնը ըսած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Աննա Նաղտալեանը:

«Նման մօտեցումն ապակառուցողական է, ինչը արժէքազրկում է խաղաղ գործընթացի լրջութիւնը: Ինչպէս նշել էինք դեռեւս Ուաշինկթընի հանդիպումից առաջ, դրա ընթացքում քննարկուել են վերջին շրջանում ատրպէյճանական կողմի պատճառով սրուած իրավիճակի հանդարտեցման հարցեր: Համաձայնագրահները կոչ են արել անմիջապէս քայլեր ձեռնարկել՝ վերականգնելու համար խաղաղութեանը նպաստող միջավայրը եւ պահպանելու հրադադարը, եւ այս ուղղութեամբ հանդէս են եկել մարդասիրական ոլորտին եւ վտանգների նուազեցմանը վերաբերող յստակ առաջարկներով: Այս շրջանակից դուրս ատրպէյճանական կողմի ապատեղեկատուութիւնը յանգեցնում է եզ-



Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Աննա Նաղտալեան

րակացութեան, որ Ատրպէյճանը մտադրուած չէ իրականացնելու համաձայնագրահների այդ կոչերը եւ առաջարկները: Աւելին, այն պնդումը, որ բանակցութիւնները կարող են յաջող ծաւալուել գինադարի կանոնաւոր խախտումների պայմաններում, լրջագոյն վնաս է հասցնում կարգաւորման ուղղութեամբ գործադրուող ջանքերին եւ խաթարում խաղաղ գործընթացը», - ըսած է Նաղտալեանը:

## Հայաստանի Մէջ Մայիսին Տնտեսական Աշխուժութիւնը Աճած է 7,3 տոկոսով

Տնտեսական աշխուժութեան ցուցանիշը այս տարուան Մայիսին նախորդ տարուայ Մայիսի համեմատ աճած է 7,3 տոկոսով: Այս մասին կը փաստեն ՀՀ ազգային վիճակագրական կոմիտէի հրատարակած տուեալները:

Մասնաւորապէս 2019-ի Մայիսին 2018-ի Մայիսի համեմատ արդիւնաբերական արտադրանքի ծաւալը աճած է 10,2 տոկոսով, շինարարութեան ծաւալը՝ 2 տոկոսով, առեւտրի շրջանառութիւնը՝ 4,9 տոկոսով, իսկ ծառայութիւններու ծաւալը՝ 14,8 տոկոսով: Միջին ամսական անուանա-

կան աշխատավարձը Հայաստանի մէջ այս տարուան Մայիսին աճած է 6,5 տոկոսով՝ կազմելով 179 հազար 623 դրամ: Ընդ որում՝ պետական օղակին մէջ միջին ամսական աշխատավարձը աւելցած է 6,9 տոկոսով, իսկ ոչ պետականինը՝ 4,7 տոկոսով:

Արտաքին առեւտրաշրջանառութեան ծաւալներուն մէջ այս տարուան Մայիսին նախորդ տարուայ Մայիսի համեմատ նկատուած է նուազում՝ շուրջ 3,9 տոկոսով: Սակայն արտահանումը աճած է 11,7 տոկոսով, իսկ ներմուծումը նուազած է 10,5 տոկոսով:

## Հայաստան Այցելած Զբօսաշրջիկներու Թիւր Աճած է 10,7 Տոկոսով

Այցելու արի Հայաստան այցելած զբօսաշրջիկներու թիւը աճած է 10,7 տոկոսով, այս տարի, առաջին եռամսեակի տուեալներով, աճը կազմած է 5,3 տոկոս: Այս մասին Ազգային ժողով՝ կառավարութիւն հարց ու պատասխանի ժամանակ ըսած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Եւ ես ուզում եմ ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն փաստի վրայ, որ դա դեռ զբօսաշրջային գազաթնակէտը չէ, էդ գազաթնակէտը նոր է սկսուած: Եւ հիմքեր կան կարծելու, որ ընթացիկ շրջանում շատ մեծ ծաւալներ ունի զբօսաշրջութիւնը», - ըսած է վարչապետը:

Ան նշած է, որ Կեդրոնական դրամատան նախագահը յայտարարած է, որ Կեդրոնական դրամատունը այս տարի պահուստաւորած է 131 միլիոն տոլար: «Մինչեւ Կեդրոնական դրամատան նախա-

գահն էստեղից հասել ա Կեդրոնական պանք, էդ տոլարի թիւը հասել ա 154 միլիոնի: Սա նշանակում է, որ այդ ծաւալի յաւելեալ արտարժուէք է մտնում երկիր, եւ սա աննախադէպ ցուցանիշ է: Այսինքն՝ շուրջ 154 միլիոն տոլար յաւելեալ տոլար է յայտնուել, դա դուրս է շրջանառութեան մէջ, յայտնուած է դրամատանային համակարգում», - աւելցուցած է վարչապետը:

Ինչ կը վերաբերի զբօսաշրջութեան զարգացման, ըստ Նիկոլ Փաշինեանի, առաջին ամենակարեւոր նախապայմանը երկրի դրական պատկերն է: «Ես կարծում եմ, որ կառավարութիւնն այս առումով շատ բան արդէն արել է: Երկրորդ, ենթակառուցուածքներ, ճանապարհներ: Մենք այս ընթացքում զբօսաշրջիկների հանգիստն ապահովելու համար նաեւ ծրագրեր ենք իրականացնում», - նշած է Փաշինեանը:

Արտաքին գործոց նախարարները համաձայնած են մօտ ապագային կրկին հանդիպիլ՝ համաձայնագրահներու հովանիի ներքոյ:

# «Մէկ Մարդու Ռեժիմը Այլեւս Տապալուած է», - Կարօ Փայլան Պոլսոյ Քաղաքապետի Ընտրութիւններուն Մասին

«Ամէն ինչ շատ լաւ պիտի ըլլայ» կարգախօսով ընտրութեան մասնակցած էքրէմ իմամօղլուն համոզիչ յաղթանակ տարած է Պոլսոյ քաղաքապետի ընտրութիւններուն:

Թուրքիոյ կեդրոնական ընտրական յանձնաժողովը ամփոփած է ընտրութեան արդիւնքները՝ վերջնականապէս արձանագրելով ընդդիմութեան թեկնածուի յաղթանակը: Ժողովրդահանրապետական եւ «Լաւ» կուսակցութիւններու առաջադրած թեկնածուն՝ էքրէմ իմամօղլուն ստացած է ընտրողներու ձայներու 54,21 տոկոսը, իսկ իշխող Արդարութիւն եւ զարգացում ու Ազգայնական շարժում կուսակցութիւններու թեկնածու Պինարի Երլտըրըմը 44,99 տոկոսը:

Ուշագրաւ է, որ ընդդիմադիր գործիչը վերջին 35 տարուան ընթացքին Պոլսոյ ՏԻՄ ընտրութիւններուն ամէնէն շատ ձայներ հաւաքած թեկնածուն է:

«Մենք այս քաղաքին մէջ ժողովրդավարութիւն պիտի կառուցենք, արդարութիւն պիտի կառուցենք: Այս հասարակութիւնը ազատութեան պիտի հասնի, պիտի յաղթէ անարդարութեան: Ես կը հաւատամ մեր ժողովուրդին, կը հաւատամ նաեւ ժողովրդավարութեան հանդէպ անոնց հաւատքին», - յայտարարած է իմամօղլուն՝ դիմելով հաւաքուած բազմութեան:



Էքրէմ Իմամօղլու

«Մեր կուսակցութեան ընտրական գումարածը այս անգամ աւելի վճռական էր: Մէկ մարդու ռեժիմը այլեւս տապալուած է: Սա ընտրութեան ամենակարեւոր արդիւնքն է: Վաղուընէ կը սկսինք նորոգել ժողովրդավարութիւնը», - «Պիա-նէթ»-ի հետ զրոյցի ժամանակ ըսած է հայազգի պատգամաւոր Կարօ Փայլանը:

Մարտ 31-ին տեղի ունեցած ՏԻՄ ընտրութիւններուն 13 հազար ձայներու տարբերութեամբ Պոլսոյ մէջ յաղթած էր ընդդիմութեան թեկնածու էքրէմ իմամօղլուն: Իշխող կուսակցութեան բողոքարկումէն ետք, սակայն, Կեդրոնական ընտրական յանձնաժողովը, Մայիս 6-ի որոշմամբ, չեղարկած էր քուէարկութեան արդիւնքները՝ յայտարարելով, որ ընտրութիւնը պէտք է կրկնել:

## ՄԱԿ-ը Հարցապնդում Յղած է Թուրքիոյ

Շարունակուած էջ 1-էն

Դիմող կողմերը միջնորդած են, որպէսզի Թուրքիոյ կառավարութիւնը դիրքորոշում չյայտնէ ներկայացուած հարցապնդման վերաբերեալ, մասնաւորապէս.

- Ինչ միջոցներ ձեռնարկուած են Թուրքիոյ կողմէ իրողութիւնը պարզելու համար, ներառեալ 1915-1923թթ. ընթացքին բռնի ներքին տեղահանութեան, կալանաւորման, արտադատական սպանութիւններու եւ հարկադրաբար անհետացման ենթարկուած հայերու ճակատագիրը կամ գտնուելու վայրը պարզելու համար:

- Ինչ միջոցներ ձեռնարկուած են ապահովելու համար այդ իրադարձութիւններուն մասին ճշմարտութիւնը գիտնալու տուած ժամներու եւ, ընդհանուր առմամբ, հասարակութեան իրաւունքը, ինչպէս նաեւ ապահովելու համար արդարութեան եւ կրած վնասի հատուցման տուածներու իրաւունքը:

- Ինչ միջոցներ պիտի ձեռնարկուին այդ իրադարձութիւններուն հետեւանքով գոհուած հա-

յերու մարմիններու գտնուելուն վայրերը, ըստ հնարաւորինս, յայտնաբերելու համար:

- Տեղեկատուութիւն տրամադրել 2017 թուականին օրէնսդրութեան ընդունման պատճառներուն մասին, որ օրէնսդիրներին կ'արգիլէ որոշակի արտայայտութիւններ ընել: Պարզաբանել, թէ ինչպէս ատիկա համատեղելի է մարդու իրաւունքներու միջազգային իրաւունքին հետ, մասնաւորապէս Քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքներու մասին միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) 19-րդ յօդուածին հետ:

- Ներկայացնել մանրամասն տեղեկատուութիւն հայերու դէմ յանցագործութիւններուն մասին յայտարարութիւններու համար անձանց պատժելու նպատակով քրէական օրէնսգրքի 301-րդ յօդուածի կիրառման դէպքերուն մասին:

Թուրքիոյ կառավարութիւնը 2019 թուականի Մայիս 17-ին կտրականապէս հրաժարած է պատասխանել այդ հարցերուն՝ ի հակադրութիւն ՄԱԿ-ի մարդու իրաւունքներու պաշտպանութեան ընթացակարգերու:

## Սահմանադրական Դատարանը Տագնապի Առջեւ

Շարունակուած էջ 1-էն

ուայ տագնապին:

Այս բոլորի մասին առայժմ լուռ են մնալու Կոնստանտինոպոլի Սարգսեանը, որ կը նկատուի Սահմանադրութեան կատարման երաշխաւորը եւ գործադիր իշխանութեան ղեկավար Նիկոլ Փաշինեանը, որոնք հաւանաբար տակաւին կ'ուսումնասիրեն ստեղծուած նոր իրավիճակը ու նաեւ կը սպասեն Եւրոպական կարեւորոյն կառոյցներէն՝ Վենետիկի Յանձնաժո-

ղովի կարծիքը, որ կը սպասուի մօտակայ օրերուն:

Նախկին իշխանութիւններու կամայական գործելաճը բազմաթիւ հարցեր կը ստեղծեն նոր իշխանութիւններուն համար, անոնցմէ մէկն ալ, ընդհանրապէս դատական համակարգի եւ մասնաւորապէս Սահմանադրական Դատարանի դիմագրուած տագնապն է, որու լաւագոյն լուծումը նախկին դատաւորներու հրաժարականն է:

«ՄԱՍԻՍ»

## Յունաստանն ու Կիպրոսը Կ'ուզեն Եւրոմիութիւնը Պատժամիջոցներ Սահմանել Թուրքիոյ Դէմ

Չի բացառուիր, որ Պրիւքսէ-լի մէջ մեկնարկող Եւրոմիութեան (ԵՄ) հերթական գագաթնաժողովի մասնակիցները յառաջիկայ ժամերուն պաշտօնապէս դիմեն կառուցի գործադիր մարմինին՝ Եւրոպական յանձնաժողովին, Թուրքիոյ դէմ կոշտ պատժամիջոցներ սահմանելու առաջարկութեամբ:

ԵՄ անդամ պետութիւններու ղեկավարները այդ քայլին պիտի դիմեն Կիպրոսին պատկանող բացառիկ տնտեսական գոտիին մէջ Թուրքիոյ կողմէ երկրաբանական հետախուզման աշխատանքներ իրականացնելու պատճառով:

ԱՔ գործակալութեան փոխանցմամբ, շաբաթակից բերքի թրքական կողմի՝ կազի արդիւնահանման ուղղուած այս գործողութիւնները Լիւքսեմպըրկի մէջ կայացած հաւաքի ժամանակ քննարկած էին ԵՄ անդամ պետութիւն-

ներու արտաքին գործոց նախարարները՝ «Ըջագոյն մտահոգութիւն չյայտնելով Թուրքիոյ անօրինական քայլերու առթիւ»:

Նախօրէին ալ Եւրոմիութեան մօտ կանոնադրութեան ղեկավար Պրիւքսէլի մէջ հաւատարմագրուած լրագրողներուն փոխանցած էին, որ Թուրքիոյ դէմ կոշտ քայլերու անհրաժեշտութեան մասին դրոյթը, ըստ ամենայնի, տեղ պիտի գտնէ գագաթնաժողովի ամփոփիչ փաստաթուղթին մէջ:

«Եւրոմիութեան խորհուրդը կոչ պիտի ընէ եւրոպական դիւանագիտութեան ղեկավար Ֆետերիքա Մոկերիինին առանց յապաղելու գործողութիւններու ծրագիր մշակել Թուրքիոյ կողմէ Կիպրոսին պատկանող բացառիկ տնտեսական գոտիին մէջ իրականացուող գործողութիւններու պատճառով», - ITAR TASS-ի փոխանցմամբ նշած է Եւրոպացի պաշտօնեաներէն մէկը:

## Գոնկրեսական Ֆրենք Փալոնի Բանաձեւը

Շարունակուած էջ 1-էն

գործընկերութիւնը» եւ կոչ կ'ընէ զարկ տալու քաղաքական, տնտեսական, ռազմական երկկողմ համագործակցութեան:

«Անցած մէկ տարուան ընթացքին Հայաստանի մէջ սկսած փոքր շարժումը վերածուեցաւ ոչ բռնի «Թաւաշայ յեղափոխութեան», որուն յաջորդեցին համընդհանուր ազատ ընտրութիւնները: Այս պատմական իրադարձութիւնները ժողովրդավարութեան նկատմամբ Հայաստանի ժողովուրդի հաւատարմութեան վկայութիւնն են, ինչը ցոյց կու տայ, թէ ինչու հարկաւոր է, որ Միացեալ Նահանգները աշխուժացնէ Փաշինեանի կառավարութեան հետ շփումները», ըսած է քոնկրեսական Փալոնը:

«Հայաստանը ներկայիս կը գտնուի վճռական փուլի մը մէջ, ուր ԱՄՆ-ի աջակցութիւնը կրնայ օժանդակել յայտնի ժողովրդավարութեան ու քաղաքացիական հասարակութեան հաստատութիւններու աճին», - ըսած է քոնկրեսականը՝ խոստանալով աշխատանքներ ծախել հայկական հարցերով յանձնարմբի միւս անդամներու ու Գոնկրէսի ղեկավարներու հետ, որ-

պէսզի բանաձեւը ընդունուի օրէնսդիր մարմին կողմէ:

«Հայաստանի կառավարութեան գործունէութեան թափանցիկութիւնը, ժողովրդավարական հաստատութիւններու ամրապնդումը, քաղաքացիական հասարակութեան զարգացումը ապահովելու գործին մէջ ԱՄՆ-ի աջակցութիւնը թոյլ կու տայ զարգացնել երկու երկիրներու միջեւ պատմական բարեկամական կապերը», - ըսուած է բանաձեւին մէջ:

Բանաձեւը Նաեւ կոչ կ'ընէ, որ ԱՄՆ-ը ղեկավար դեր ստանձնէ Հայաստանին օգնելու առումով, «որպէսզի ժողովուրդը կարողանայ ամրապնդել զբանցուած առաջընթացը, ինչի համար հարկաւոր է զարկ տալ երկկողմ այցելուին, պաշտպանութեան բնագաւառին մէջ՝ քննարկումներուն, միջազգային խաղաղապահ գործողութիւններուն մէջ Հայաստանի մասնակցութեան, առեւտուրի ու ներդրումներու բնագաւառին մէջ՝ աճին, աջակցիլ քաղաքական կուսակցութիւններու զարգացման, թափանցիկութեան, օրէնքի գերակայութեան, քաղաքացիական հասարակութեան զարգացման եւ մամուլի ազատութեան»:

## Քոչարեանի Երկու Զուակները Չեն Ծառայած

Շարունակուած էջ 1-էն

կ'առնչուի հանրութեան նկատմամբ պարտաւորութիւններ ունեցող բարձրաստիճան պաշտօնեայ ըլլալու հանգամանքի հետ:

«Ինչպէ՞ս է իր որդու հաշուահամարին 18 միլիոն տոլար յայտնուել՝ սկսած այն ժամանակներից, երբ Քոչարեանը զբաղեցնում էր ՀՀ ղեկավարի պաշտօնը: Այս հարցերին պարոն Քոչարեանը չի անդրադառնում եւ այս հարցով, կարծում եմ, ամենայն մանրամասնութեամբ պէտք է զբաղուեն իրաւապահ մարմինները:

Ինչ վերաբերում է նրա արած մի շարք պնդումներին, պէտք է յուսալ, որ պարոն Քոչարեանը նկատի չունի, որ արցախեանց ազատամարտը կարող է կողոպտելու օրէնքով մարդը կարող է կողոպտելու օրէնքով լինելու, սեփական քաղաքացիների վրայ կրակելու, կամ նման

հրաման տալու արտօնութիւն ունենալ:

Կարծում եմ նաեւ՝ պատմականօրէն արձանագրուած փաստ է, որ Ռոպերթ Քոչարեանը ընդունելի է համարել Մեղրին եւ ազատագրուած տարածքները ԼՂ անորոշ կարգավիճակի դիմաց Ատրպէյճանին յանձնելու տարբերակը: Յամենայնդէպս՝ ականատեսներու մանրամասն վկայութիւններին ի պատասխան որեւէ համոզիչ հերքում չի հնչել:

Ինչ վերաբերում է Արցախի նկատմամբ վարչապետ Փաշինեանի վերաբերմունքին, կարծում եմ սրա մասին ամփոփ պատկերացում է տալիս այն, որ Փաշինեանի միակ որդին զինուորական ծառայութիւն է անցնում Արցախում: Մի բան, որ Քոչարեանի երկու որդիներից ոչ ոք չի արել», - ըսած է վարչապետի մամուլի խօսնակ Վլատիմիր Կարապետեանը:

# Մանկավարժական Համալսարանում Անցկացուեց «Խորհրդային Հայաստանը 1920-1930- ական Թուականներին» Խորագրով Գիտաժողով

Խորհրդային Հայաստանում տնտեսական, մշակութային եւ այլ ոլորտների նուաճումները մատնանշելու նպատակով Յունիսի 24-ին Ս. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանում անցկացուեց «Խորհրդային Հայաստանը 1920-1930-ական թուականներին» խորագրով գիտաժողովը:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ պատմական գիտությունների դոկտոր, «Հայաստանը 1920-1991 թուականներին» գիտական լաբորատորիայի գիտաշխատող Սառա Մտեփանեանը տեղեկացրեց, որ Մանկավարժական համալսարանում երկրորդ տարին է, որ գործում է վերոնշյալ գիտական լաբորատորիան, որի աշխատակիցները ֆինանսաւորւում են ՀՀ գիտական պետական կոմիտէի կողմից, եւ նրանց խնդիրն է նորովի ուսումնասիրել Խորհրդային Հայաստանի պատմությունը: Ուսումնասիրությունների արդիւնքները պարբերաբար ամփոփում են գիտաժողովների, կլոր սեղանների կազմակերպմամբ:

«Յայտնի է, որ խորհրդային տարիներին խորհրդահայ պատմագրութիւնը կոմունիստական գաղափարախօսութեան թելադրանքով խիստ կողմնակալ է ուսումնասիրուել: Երբ Հայաստանն անկախացաւ, մենք ընկանք այլ ծայրայեղութեան մէջ եւ սկսեցինք փնտրել ամբողջ խորհրդային անցեալը, մինչդեռ այն ունէր նաեւ ձեռքբերումներ: Խորհրդային տարիներին կառուցուեցին համալսարաններ, զարգացաւ գրական կեանքը, մշակույթն ու տնտեսութիւնը, ուստի լաբորատորիան իր առջեւ դրեց խնդիր՝ նորովի ուսումնասիրութիւններով բացայայտել խորհր-



դային պատմութիւնն ու այն փոխանցել սերունդներին», -նշեց Մտեփանեանը:

Գիտաժողովին բացման խօսքով հանդէս եկաւ պատմական գիտությունների դոկտոր, Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբէն Միրզախանեանը:

Ռեկտորը նշեց, որ Խորհրդային Միութեան վերաբերեալ մօտեցումները շատ դժպքերում սուբյեկտիւ են:

«Ընդունելի չէ, երբ ժխտում է այն ամէնն ինչ կարող է այս կամ այն չափով դրական լինել: Երբ Գիտութեան կոմիտէի միջոցով ստեղծուեց եւ հաստատուեց լաբորատորիան, այն իր առաջ դրեց խնդիր՝ անդրադառնալ պատմագիտական նշանակութիւն ունեցող այն բոլոր հարցերին, որոնք Հայաստանի պատմութեան մէջ իրենց արտայայտութիւնն են ունեցել մի ամբողջ եօթանասուն տարի:

5. To provide detailed information about the cases in which Article 301 of the Criminal Code has been applied to punish individuals for statements made alleging crimes against Armenians.

The Government of Turkey on May 17<sup>th</sup> 2019 bluntly refuses to answer those questions by UN human rights mechanisms.

We praise the special procedures engaged by the WGEID and the two Special Rapporteurs and we support the pursuit of this unprecedented and important process.

While this effort is not a substitute for genocide recognition or full and adequate reparations for the mass atrocities and confiscations of properties suffered by the Armenians during this period, actions by the relevant United Nations human rights organs would constitute significant steps toward the disclosure of the truth and redress for this open wound on humanity.

Holy See of Etchmiadzin – HH Karekin II (Vagharshapat, Armenia)  
Catholicosate of Antelias – HH Aram I (Beirut, Lebanon)  
Armenian Evangelical World Council (USA)  
Armenian General Benevolent Union (USA)  
Armenian Missionary Association of America (USA)

spectrum of Armenian-Turkish relations, including the different attitudes of Diasporan circles and masses to the past, present, and future relations with the Turks. Hakobyan investigates this difficult and very complex historical and political matter – far from understanding it as a mere Republic of Armenia – Republic of Turkey bilateral problem, but as an issue of the Armenian and Turkish peoples' mostly antagonistic relationship. A book that is very useful

for Armenian diplomacy, Armenian historiography, and Turkology," wrote historian Gevorg Yazichyan.

Tatul Hakobyan's first book – *Karabakh Diary, Green and Black*, first was published in 2008 and since then has had several editions including English, Russian, Turkish, and Arabic.

You can contact with the author by email- [tatarmen@yahoo.com](mailto:tatarmen@yahoo.com) or [aniarcf@gmail.com](mailto:aniarcf@gmail.com) or dial +374 91 426435 and +374 98 655321.

### FM Zohrab Mnatsakanyan

Continued from page 1

U.S. bilateral cooperation agenda.

In a statement, the U.S. State Department said the two men discussed the Karabakh conflict and other "regional challenges and opportuni-

ties." Also, it said, Hale briefed Mnatsakanian, among other things, on the Trump administration's "sanctions policy."

Earlier in the day, Bolton met with Azerbaijani Foreign Minister Elmar Mammadyarov.

## AMAA to Celebrate 100th Anniversary of Its Founding on October 19 in Boston



### FLORENCE AVAKIAN

PARAMUS, NJ – “We’ve got to do something,” they said, and they did, and continue to do so, declared Zaven Khanjian, Executive Director and CEO of the Armenian Missionary Association of America, (AMAA).

The “they” are the dedicated couple, John and Michèle Simourian who with “commitment, goodwill and action” took devoted action and inspired the members of the AMAA to help the survivors of the 1988 earthquake in Armenia 30 years ago.

This couple has continued to dedicate their efforts for four decades to the values and work of the AMAA, an outstanding Christian non-sectarian organization.

2018 was also the 100<sup>th</sup> anniversary of the founding of the AMAA, a very symbolic date for this noteworthy organization that has been the “Good Samaritan” to many needy people - orphans, widows, the poverty-stricken sick and grieving around the world.

Their vital and dynamic work for more than 100 years will be celebrated in grand style at a banquet in Boston, MA, on Saturday evening, October 19. Co-Chairs of the banquet are John and Michèle Simourian.

In a brief telephone conversation with this writer, Michèle Simourian said, “Out of our great respect for its sterling reputation, and what it stands for during the past 100 years, it has been a privilege to be involved with the AMAA. Also our intense love for our Armenian ancestry has played a huge role in working for our people.”

The AMAA Orphan and Child Care Program, “a birth-child of the earthquake,” has continued to serve the impoverished children of Armenia and Artzakh,” stated Mr. Khanjian.

Michèle Simourian, an AMAA Board member, and founding Co-Chair of the Program, has “vigorously led and served it” for more than 25 years.



### An AMAA Celebration in Armenia

Last year the AMAA celebrated its Centennial in Armenia by inaugurating the new AMAA Community Center and Sanctuary in Gyumri which was the epicenter of the earthquake. “It celebrated the revival of Armenia’s historical epicenter of cultural heritage and intellectual treasure,” declared Mr. Khanjian.

The Center “will bring joy, add a smile on the faces of its children, and bring honor to God,” he added.

John Simourian who has been a long-time member of First Armenian Church of Belmont, MA and past trustee, will serve as Master of Ceremonies of the banquet. He revealed that he had become involved with the AMAA through association with his “wife’s leadership.”

This is “a wonderful and far-reaching organization, going strong for more than 100 years. It responds to the physical and spiritual needs of the helpless and the homeless,” he commented.

He said he was “looking forward” to his role as banquet MC, working with the Banquet Committee members and developing an interesting program for the October 19 celebration.”

With obvious emotion, Zaven Khanjian declared, “Our task as the blessed recipients of those who walked before us is set, and we are ready to embrace the future. With added resources, expanded services and multiplied vigor, a brighter future is on the horizon of the mission of the AMAA.”

## Dr. Garbis Der-Yeghiayan Elected Chair of Rotary Middle East Initiative Council



The Executive Committee of Rotarian Action Group For Peace recently elected Dr. Garbis Der-Yeghiayan as Chair of the newly-established Middle East Initiative Council. In the month of March, 2019, a high-ranking Rotary delegation headed by Dr. Der-Yeghiayan visited Israel and Palestine meeting with numerous government officials, leaders of peace-promoting organizations, university presidents and students, as well as Rotarians. The idea of establishing a peace council was conceived during the delegation's visit to the Holy Land.

Upon his election, Dr. Der-Yeghiayan said: "This is a fresh approach led by Rotarians and youth groups to create a culture of peace. It is based on shared values and desired outcomes of all concerned to include: 1. Safety and Security; 2. Prosperity; 3. Quality of Life. We are committed to full participation in a process to equitably meeting the needs of current and future generations".

The proposed projects of the Council include: Organizing peace conferences and workshops to address the root causes of conflict among parties with the participation of Rotarians and international thinkers with global experience.

Offering a summer program for teens to help them learn about the history, culture and politics of the Middle East. Publishing position papers authored by Council Members and other scholars on events in the Middle East. Working collaboratively with like-minded peace organizations in the region to affect change. Organizing annual peace missions to the region to learn and to better understand the status quo.

The Council will be composed of prominent Rotarians, scholars, statesmen, peace-builders, former ambassadors, former members of parliaments and youth representatives.

Dr. Der-Yeghiayan is a seasoned Rotary leader. He is the first Armenian American elected to serve as a District Governor (California-Nevada, USA) in the history of Rotary International. He has held all senior positions in Rotary, including the chairmanship of Rotarian Action Group For Peace. He is the recipient of Rotary's highest honors.

Dr. Der-Yeghiayan expressed his gratitude for the honor bestowed upon him and concluded: "Every conflict is an opportunity for better understanding. We encourage openness from people in disputes because direct communication is the best way to find solutions."

## Congressional Resolution Praises Armenia


Continued from page 1

Pallone said.

“Armenia is at a critical moment where U.S. support can help foster the growth of pro-democratic and civil society institutions. I am hopeful that this resolution is the beginning of a broad-based strategic upgrade of the U.S.-Armenia partnership based upon our shared interests and common values. I look forward to working with my colleagues on the Congressional Caucus on Armenian Issues and with House Lead-

ership to pass this important bipartisan legislation. Additionally, I will continue to work with my colleagues toward official U.S. recognition of the Armenian Genocide,” he added.

“As Co-Chairman of the Congressional Armenian Caucus, I am proud to co-sponsor a resolution celebrating the strategic alliance between Armenia and the United States. The two nation’s continued friendship and cooperation promotes regional stability and is mutually beneficial for both parties,” said Congressman Bilirakis.



NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC

**MEMBER**

**Garine Depoyan**

626-755-4773

554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106

ghdepoyan@gmail.com

# Փառք Մեծաց - Մաղաքիա Պատրիարք Օրմանեանի 100-ամեակ Հայ Եկեղեցւոյ ճշմարիտ Պատմաբանն ու Մեկնաբանը (1841-1918)

«Ազգապատումը կրնայ իւր տեսակին մէջ մշակուող երկասիրութիւն մը ըսուիլ, զի աշխարհաբար լեզուով, կատարեալ ընդարձակութեամբ, քննադատական ոճով, ժամանակագրական ճշդութեամբ, եւ անճշդութեանց ուղղութեամբ հաւասար ուրիշ գործ մը տակաւին իրատարակուած չէ»

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ

ՂՈՎՏ. ԶԱԻՆ Ա. ՔՅՆՅ.  
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

## Վերադարձ Մայր Եկեղեցի

Անցեալ 2018 տարին նշեց Հայ Եկեղեցւոյ կարկառուն դէմքերէն՝ Կ. Պոլսոյ Պատրիարք, աստուածաբան, պատմագէտ, կանոնագէտ, ուսուցչապետ եւ ներհուն մտաւորական Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեանի վախճանման հարիւրամեակը որ պատահեցաւ Կ. Պոլսոյ իր ծննդավայրին մէջ 1918 թուի Նոյեմբեր 19-ին:

Օրմանեան Պատրիարքի կեանքը Հայաստանեայց Եկեղեցւոյ անցեալ դարու պատմութեան մէջ ինքնին դարձնող մը կազմեց, յատկանշուած նախ իր հոռոմէնագրականութենէ վերադարձով դէպի Հայաստանեայց Եկեղեցի, եւ ապա անոր նկատմամբ իր անգուգական եւ մնայուն ջատագովական գրականութեամբ: Օրմանեան իր վերադարձը կ'որակէ այսպէս. «Հոռոմէնագրականութենէ հեռանալու միտքը իմ վրայ ո՛չ կիրքի մը վայրկենական որոշում եւ ո՛չ շահադիտական կեղծիք մըն էր, այլ երկար ատեն խորհուած եւ կշռուած, եւ խոհական քայլերով յառաջացած գործ մը եղած է»: Օրմանեան Մաղաքիա Վարդապետ գլուխն անցած 45 այր մարդոց եւ 30 կիներու խումբին, 1879 թուի Գիւտ խաչի կիրակի օր «մեծահանդէս տօնախմբութեամբ» վերադարձաւ Մայր Եկեղեցի Ներսէս Վարժապետեան Պատրիարքի արտօնութեամբ, որուն ձեռքով նոյն օրն իսկ ծալրագոյն վարդապետի տասը աստիճանները ստացաւ:

## «Ազգապատում» Ա. Բ. Գ. Հատորներ

Հայաստանեայց Մայր Եկեղեցի վերադարձին ետք, Օրմանեան Պատրիարքի մեծարժէք «Ազգապատում» աշխատասիրութիւնը, երեք մեծագիր հատորներով, կը ներկայացնէ, ինչպէս կը գրէ հեղինակը, «Հայ Եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը, յարակից ազգային պարագաներով պատմուած»: Առաջին երկու հատորները ինք ի լոյս ընծայեց Կ. Պոլսոյ մէջ 1912-1913 թուականներուն, իսկ երրորդը՝ յետ մահու իր անդրանիկ Արմաշական սանը՝ Տ. Բաբգէն Յպս. Կիւլիսէրեան 1927-ին Երուսաղէմի մէջ, որուն յանձնարարած էր կատարել:

Յիրաւի Օրմանեան Պատրիարքի կոթողական այս գործը աննախընթաց եւ մնայուն շարադրեալ պատմութիւնը եղաւ Հայ Եկեղեցւոյ եւ Հայ Ազգին՝ Յիսուս Քրիստոսին սկսեալ մինչեւ իր օրերը, ամփոփելով դէպքերը Մայր Աթոռոյ Գահակալ Կաթողիկոսներու անուններուն ներքեւ: Հեղինակին նպատակը եղած է Հայ Եկեղեցւոյ իսկութիւնը ճշդութեամբ ցոյցանել, հայադաւան ուղղափառ եկեղեցին իր էութեամբը ներկայացնել իրենց պարզութեանը մէջ՝ հիմնուելով բոլոր հայ մատենագիրներու տեղեկութեանց վրայ, առանց բացառութեան: Օրմանեան իր այս անփոխարինելի գործը ձօնած է հայերէն տպագրութեան 400-ամ-

եակին եւ հայ դպրութեան 1500-ամեակին, որոնք նոյն տարին կը յիշատակուէին Հայրապետական յատուկ կոնդակով:

Անտարակոյս համայնագիտարան մը կը ներկայացնեն երրեակ հատորները որոնք կը կնքեն հոգեւոր եւ քաղաքական մեր անցեալի վաւերական պատմութիւնը, յանձնելով զայն գալիք սերունդներուն: Տողերս գրողը իր հիացումին ապացոյցը տուաւ «Ազգապատում»ը շարունակելով որպէս պարտք եւ երախտիք հանդէպ իր Մայր Եկեղեցիին եւ մեծանուն երախտաւորին՝ Մաղաքիա Պատրիարք Օրմանեանին, զայն հասցնելով մինչեւ 21-րդ դարու սկիզբը:

## «Հայոց Եկեղեցին»

Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռին վրայ մնաց 12 տարիներ պատուով եւ արդիւնքով: Իր այդ բարձր եւ փշոտ պաշտօնին ետք ան ձեռնարկեց գրական լուրջ եւ հեղինակաւոր աշխատանքի: 1910-ին Ֆրանսերէն լեզուով հրատարակեց իր ծաւալուն երկը՝ Հայոց Եկեղեցին գոր շուտով թարգմանեց հայերէնի: Այդ երկը հիմնապէս գրեց օտարներուն համար որպէս «իւր առաջին ձեռնարկներէն մին եւ իր հնօրեայ բաղձանքին գործադրութիւնը»: Օրմանեանի նպատակն էր «օտարներու միտքը լուսաբանել Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցւոյ նկատմամբ», եւ իրաւամբ իր այդ գործով, որ յետագային ունեցաւ բազում հրատարակութիւններ ու թարգմանութիւններ, Հայաստանեայց Եկեղեցին օտար հասարակութեան եւ հայ մտաւորական դասուն կը ներկայացնէր 45 խտացեալ գլուխներով, իր էութեան եւ պարզութեան մէջ, իր պատմական եւ վաւերական բնոյթով:

Հայոց Եկեղեցին ու թ մասերու բաժնուած է անհաւասար գլուխներով ուր կը պարզաբանուին Հայ Եկեղեցւոյ երկարաձիգ պատմութիւնը գիտական հիմունքով, սկիզբէն մինչեւ 19-րդ դար, անոր «վարդապետութիւնը», «բարեկարգութիւնը», «ծէսը», «գրականութիւնը», եւ «ներկայ կացութիւնը»: Այս բոլորը Օրմանեան իրաւթափանց հմտութեամբ եւ պատմական վաւերականութեամբ համադրած է ինքնատիպ ոճով, սուր տրամաբանութեամբ եւ հեղինակութեամբ: Ֆրանսերէնի հրատարակութեան առիթով «Եւրոպական մամուլին հեղինակաւոր քննադատները նպաստաւոր ընդունելութիւն» յայտնած են, խոստովանելով որ «ցարդ գրեթէ անծանօթ մնացած նիւթի մը վրայ բաւարար տեղեկութիւն» ստացած են: Անոնք զայն նկատեցին «իբր Հայ Եկեղեցւոյ պատմութեան եւ սկզբունքներուն ճիշդ եւ գրեթէ կատարեալ ամփոփումը», որ միանգամայն կը լրացնէր «Արեւելքի խնդիրներով շահագրգռող Արեւմուտցիներուն զգացած մեծ պակասը», որովհետեւ «ան կը բացատրէ Արեւելեան քրիստոնէութեան իսկութիւնն ու արտայայտութիւնները»: Իր այս գիրքով Օրմանեանի տեսութիւնները կշիռը ունեցած են

ու մնայուն ուղղութիւն տուած յետագայ սերունդներուն, յատկապէս հայ հոգեւորականութեան եւ օտար յարանուանութեանց:

Հարկ է այստեղ աւելցնել թէ Լոնտոնի մէջ Դերենիկ եպիսկոպոս Փոլատեանի կողմէ հրատարակուած 1955 թուականի անգլերէն տպագրութիւնը ամենէն վաւերագրականն է որ ունի յաւելեալ 20-րդ դարի մը ուր Սրբազանը ամփոփած է 20-րդ դարու Հայ Եկեղեցւոյ ժամանակագրութիւնը որ ինքնին այժմէական դարձուցած է Օրմանեանի գործը յաշտ օտարներուն: Նորագոյն անգլերէն հրատարակութիւններ անցնող քսանամեակի ընթացքին անփոյթ եւ անթոյլատրելի կերպով չեն ընդգրկած սոցյալաբանական անգլերէն բնագիրը եւ յումպետս եւ հապճեպ կերպով կրկնած են նախնազոյն 1912 թուի ժամանակավրէյ բնագիրը դուրս ձգելով այդ 20-րդ դարի, վերջին 2016 թուին Երեւանի մէջ Անկիւնաբար կոչուած հրատարակչութեան կողմէ, որուն յատուկ քննադատական մը գրելու հարկը տեսանք վերջերս:

## Առաքելական Ծագումը

Օրինակ մը միայն յայտնի կը դարձնէ Օրմանեանի վաւերական գնացքը երբ ան կը բանայ գիրքը Հայ Եկեղեցւոյ առաքելական ծագման վերաբերեալ: Ան նախ կուտայ պատմական եւ աւանդական տուեալները, ու կը հերքէ այլոց կարծիքը որոնք ձգնած են մերժել այդ կարեւոր հանգամանքը: Իր փաստարկութիւնը կու գայ յիշեցնել հակառակ կողմին թէ «հարկ կը սեպենք դիտել տալ թէ աւելի զօրաւոր չեն ուրիշ եկեղեցիներուն առաքելականութեան աւանդութիւններն ալ, եւ նոյնիսկ Պետրոս Առաքեալի Հռոմ երթալուն պատմութիւնը, կամ Յովհաննէս Առաքեալի Եփեսոս գտնուած ըլլալը, քննադատներէ իբր անվիճելի ստուգութիւն չեն նկատուիր»: Եթէ, կը հաստատէ Օրմանեան, «յուսահոռոմէական աշխարհին գործերն ալ պարզ կամ տկար աւանդութիւններով կ'որոշուին, որչափ առաւել եւս Հայաստանի առաքելականութիւնը, որ նոյնիսկ գուրկ էր գիրէ եւ գրականութենէ»:

Առողջ է նաեւ Օրմանեան Պատրիարքի դատումը Հայրապետական Աթոռի Սիսիւնի միջնաբերդի վերադարձի մասին 1441 թուականին, երբ այլեւս որեւէ արդարացուցիչ պատճառ չկար Կիլիկիոյ թագաւորութեան եւ քաղաքական անկեալ վիճակի մը մէջ որ Ընդհանրական Կաթողիկոսը «իւր նախնական եւ նուիրական սրբավայրէն դուրս թափառէր»:

## Քրիստոնէութեան Դարձի Նպաստը

Գիրքին 45-րդ գլխուն մէջ Օրմանեան կ'առարկէ ընդդէմ անոնց որոնք Հայաստանի անկումը կը վերագրեն քրիստոնէութեան, յիշեցնելով թէ լման դար մը եւ քառորդ անցած էր քրիստոնէութեան դարձին եւ Արշակունեաց թագաւորութեան անկումին միջեւ (301-428), եւ մանաւանդ որ այդ կործանումի «նախասկիզբները չորրորդ դարէն ալ առաջ են, եւ իրենց ծագումը կ'առնեն Հռոմայեցոց եւ Պարթեւացի մէջ մղուած պատերազմներէն»: Հետեւաբար կ'ըսէ «Հա-



յոց քրիստոնէութիւնը ընդունելը ո՛չ միայն անկումին պատճառ չեղաւ, այլ այդ վտանգը յետաձգելու արդիւնքը ունեցաւ: Ասոր հակառակը ընդունելի պիտի նշանակէր թէ բարբարոս եւ անկիրթ վիճակը ամենեւին օգտակար վիճակն է ազգերու դիրքը զօրացնելու»:

Սոյն գլխուն մէջ Օրմանեան դիտել կուտայ որ հայոց քրիստոնէութիւնը պաշտպանելը ի գին վարդանանց եւ այլ մեծամեծ զոհողութեանց, զուտ կրօնական չէր, այլ նաեւ ազգային, որովհետեւ Պարսկաստան կը հետամտէր ջնջել հպատակ ազգերու առանձնաշատութիւնները, եւ եթէ հայերն ալ կրօնափոխութեան հպատակէին, իրենք ալ մագղեգական կրօնքով պարսիկ տարրին մէջ ձուլուած պիտի ըլլային:

## Բարեկարգութիւն

Բարեկարգութեան գլխուն տակ երբ Օրմանեան կը գրէ կղերականութեան նիւթի շուրջ մեզմէ հարիւրամեակ մը առաջ, ամուսնացեալ եւ կուսակրօն կղերին յարաբերութիւնները կը ճշդէ, աւելցնելով այն պարագան որ ամուսնացեալ կղերին առջեւ դէպի եպիսկոպոսութիւն բարձրանալու արգելքը «ո՛չ հին օրէնք է, եւ ո՛չ կանոնական պահանջ», յիշեցնելով որ «եպիսկոպոսութիւնը երբ լաւ ուսումնասիրուի, պիտի տեսնուի թէ անիկա քահանայական պաշտօններու եւ հոգ հոգուց կոչուած ծառայութեանց լրումը կամ բովանդակութիւնն է, եւ ամուսնացեալ քահանայութեան կարգէն է»: Օրմանեան Պատրիարքի եզրակացութիւնն այն է թէ եպիսկոպոսական ընտրելիներու մասին եկեղեցւոյ հնաւանդ եւ կանոնական ձեւը նորէն ձեռք առնուի, «եւ ամուսնացեալ կղերին առջեւ նորէն բացուին եկեղեցականութեան բարձրագոյն աստիճանները», ինչպէս ինք բնորոշած է: Այս հաստատումներուն վրայ արդէն անցեր են հարիւրյիսուն տարիներ եւ սակայն այսօր Հայ Եկեղեցին կը մնայ ուր որ էր:

## «Համապատում» Հատորը

Օրմանեան Պատրիարքի միւս կարեւոր հատորը «Համապատում»ն է որ Չորս Աւետարաններու համապարփակ բովանդակութիւնը կը ներկայացնէ՝ խտացեալ եւ պատմուած դէպքերու համաձայնութեամբ: Նման գործեր օտար հեղինակներ բազմիցս պատրաստած են, եւ սակայն հայ կրօնական գրականութեան մէջ չկար «Համապատում»ին

# Հնչակեան Քսան Անմահների Ոգու Խոյեանքին

Արեգակի մեծութիւնը մայրամուտին է երեւում  
ՇԱՐԼ ՎԱՐԻՆԱԿ ԱԶՆԱԻՈՒՐ

## ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Հայոց աստուածների մեհեանների հաւատքի տաճարները՝ նաեւ ուսման վայրեր են եղել: Այնտեղ, աստուածների սպասուորներ քուրմերը, ուսուցանել էին ՏԻՐ աստուածոյ պարգեուած գիր, գիտութիւն, արուեստներ, գրել իրենց արարչական ցեղի պատուները: Հայոց աշխարհի մանուկներ, Սուրբ Մեսրոպի առաջ ծունկի եկած, խնդրում՝ գիր ուսուցանել իրենց, այդպէս էլ հայոց աստուածների մեհեաններում ցեղի մանուկներ՝ Տիր աստուածոյ առաջ ծունկի եկած աղաչել իր գիրը պարգեւել իրենց: Տիր աստուածոյ իմաստութիւնը նրանց հոգիներում արարման ոգի էր ծնել, այն փոխանցուել սերունդներին: Հողի մշակը իր որդիներին գիտելիքները ուսուցման տարել, որոնցից շատերը իրենց արարչական ցեղի իմաստութեան լոյսի ջահերը վառել աշխարհեր, աստղերին հպել, նրանց ծնունդի հէքիաթը պարգեւել աշխարհին: Զինուորներ եղել, քաջ Նահապետ Հայկի յաղթանակի «Եռանկիւնի» պաշտպանութեան հրաշավառ ուսմունքը տարել աշխարհներ, եղել զօրավարներ, մարաջախտներ, ծովակալներ, իրենց վարած մարտերում յաղթանակների փառքի պսակները ճակատներին եկել տուն: Իրենց հոգիներում Տիր աստուածոյ պարգեւած ոգուներ շնչանքով՝ նոր գիտական ուսմունքների, արուեստների, բանաստեղծութեան լոյս ճառագեւ աշխարհներ: Մի պահ խոսկա՛, երեւակայութեանը Մոխի՛չք հաղորդիր, ո՞ր մէկ ցեղի ուրիշ մարդիկ իրենց պատանի մանչերին, ահաւոր դժուար ու վտանգներով լի ճամբաներով, իրենց աշխարհից շատ հեռու ուսման վայրեր՝ Բիւզանդիոն, Աղեքսանդրիա, յունական Աթէնք, Տրապիզոն ճամբել: Արմին-Հայ մարդիկ նման հեռու աշխարհներ ճամբել էին իրենց մանչերին, որ գիտելիքներ ամբարէին իրենց արմենական մտքերին, այն իրենց աշխարհ բերէին ցեղի պատանիներին ուսուցանելու: Ինչ զարմանալի է, Հայաստան աշխարհում մարդիկ, հազար գրկանքներով գաւակներին ուսման են տանում, հաստատ իմանալով, որ այն կարող էր համապատասխան աշխատանքի հարաւորութիւն չընձեռել նրանց: Այ, այդ ոգին է հասել նոր ժամանակներ, հազար դարեր գնում իրենց ցեղի յաւերժութեան հետ: Ինչ զարմանալի է, Հայոց աշխարհի հողը փորելիս, «գիր» է դուրս գալիս:

Մեծ Հայ, «սեւ ոսկու» հանձարեղ արդիւնաբերող Մանթաշեան, երկու հարիւրեակից աւելի ցեղի պատանիներին ուսումնառութեան ճամբել Եւրոպական երկրներ, որ հայրենի երկիր գիտելիքներ բերէին: Ազգի բազում ուրիշ նուիրեալներ էլ Եւրոպայի տարբեր հաստատութիւններում ուսունառութեան ճամբել պատանիներ, որոնցից շատեր ծառայել են երկրի գիտութիւնների ու արուեստի բարգաւաճմանը, իրենց տիրապետած ուսումնառութեան գիտելիքները ճամբէին մանուկներին, պատանիներին: Թիֆլիս քաղաքի մեծահարուստ Հայ գործարարը, ուշիմ պատանի Աւետիս Նազարէ-

կին փարիզում ուսանելու ծախսերն էր հոգացել: Սորպոնի համալսարանում էր ուսանել Աւետիս Նազարէկը: Այնտեղ ծանօթացել իրեն նման յեղափոխական նկարագրի ոգի ունեցող ուսանող Մարօ Վարդանեանի հետ: Աշխարհի կարգերը փոխելու, աշխատաւոր մարդկանց ստրկութեան շղթաները փշրելու ու ազգի ազատագրական պայքարի գաղափարների նոյն ոգու կրակը նրանց հոգիները սիրոյ նարօտով էին կապել, ամուսնացել էին: Ժընեւ հաստատուելով, ծանօթացել էին երկրից ուսման եկած տարեկից, ընկերային նոր գաղափարներով տոգորուած եռանդուն ու խանդավառ սղանների հետ: Աւետիս Նազարէկ, Փարիզում ուսանելու տարիներին՝ հայրենասիրական, ընկերային, յեղափոխական բովանդակութեամբ յօդուածներ հրատարակել Ֆրանսիա, Մարսիլիա հրատարակուող՝ Վանում «Արմենական» կազմակերպութեան հիմնադիրներից՝ Մկրտիչ Փորթուգալեանի «Արմէնիա» լրագրում, մարդկանց սրտերին հայրենի հողի պաշտամունք պատարագել:

Աւետիս Նազարէկ ու ընկերներ նախաձեռնել էին յեղափոխական կազմակերպութիւն ստեղծել: Ժընեւի համալսարանի գրադարանը, քաղաքի ծանօթ սրճարանները, իր ներկիկ բնակարանը դառնում տեղի երիտասարդների հանդիպումների ու հաւաքոյթների հաւաքատեղիներ: Իրենց մտահոգել էր ի՞նչպիսի կազմակերպութիւն ստեղծել, որ այն կարողանար իրականացնել Հայաստանի արեւելեան ու արեւմտեան տարածքները միաւորող, ազատ ու անկախ պետութիւն: Մտադրուել էին կազմակերպութեան գործունէութիւնը սկզբում ծաւալել Արեւմտեան Հայաստանի տարածքում, որտեղ հայերը կրում էին թուրքի դաժան տիրապետութիւնը: Նազարէկի քաղաքական համոզմունքն էր՝ սեփական ուժերին վստահելով համագրգային ապստամբութիւն իրականացնել եւ ոչ թէ Եւրոպական մեծ տէրութիւնների միջամտութեան յոյսին ապաւինել: Նպատակին հասնելու համար անհրաժեշտ էին համարել յեղափոխական կազմակերպութիւն ստեղծել: 1887 թուականի Օգոստոս ամսուայ մի երեկոյին, Նազարէկ, Ժընեւի իր բնակարանում ժողովի էր հրահրելու ազգային ազատագրութեան հարեւրների նուիրեալ ընկերները, որոնց հետ համախորհուրդ հիմնել յեղափոխական կազմակերպութիւն՝ «Հնչակեան Կուսակցութիւն»-ը: Աւետիս Նազարէկ-ին կուսակցութեան «Հիմնադիր» մակդիրն էին շնորհել, սակայն այն ստեղծողներն ունէին նոյն «Հիմնադիր» անդամի յեղափոխական ու ազգային ազատագրական ոգու լուսապսակ ճակատները, ցեղի ոգու խոյեանքը, նրանք էին՝ Աւետիս Նազարէկ, Մարօ Վարդանեան-Նազարէկ, Ռուբէն Խան-Ազատ, Գաբրիել Կաֆեանց, Քրիստափոր Օհանեան, Գէորգ Ղարաջեան եւ Լեւոն Ստեփանեան: «Հնչակեան Կուսակցութիւն»-ը, իր քաղաքական գործունէութիւնը իրականացնելու համար, Աւետիս Նազարէկ ու Գէորգ Ղարաջեանեան կազմել էին նրա կանոնադրական ծրագիրը, որն ունէր



Հնչակեան Կուսակցութեան հիմնադիրները - Ժընեւ 1887

«Մօտաւոր» ու «Հեռաւոր» նպատակներ: Մօտաւոր նպատակը՝ համաժողովրդական զինուած ապստամբութեան միջոցով արեւմտահայութեան ազատագրութիւնն էր: Նազարէկ, Թուրքիայում հայերի փրկութեան միակ միջոցը համարել էր յեղափոխութիւնը, որը անհրաժեշտ էր իրականացնել, հաւատալով, որ միայն գոհաբերուած արիւնը կարող էր Հային փրկել, միայն կռոււմ հոսած արիւնը կարող էր սարսափեցնէր բռնաւոր թուրքին: Կուսակցութեան հեռաւոր նպատակը հասարակութեան ընկերային, քաղաքական եւ տնտեսական մարզերում ընկերվարական գաղափարների ներդրումն էր: Յեղափոխական կազմակերպութիւնը ու նրա գործունէութեան ծրագիրը ստեղծուած էին, անհրաժեշտ էր այն սերմանել հայ ժողովուրդի գիտակցութեան մէջ, որ մասնակիցը լինէր երկրում թուրքի գարշահոտ խորտակող «Աւզեան ախոռների աղբի» նման տանել լցնելու հեղեղատներ:

Կուսակցութեան պաշտօնաթերթ հրատարակեցին, Ռուս Հերցենի լոյս ընծայած թերթի՝ «Կոլոկոլ» (զանգ) անունից, այն հայացնելով կնքել էին՝ «Հնչակ» անունով: Նրա անունով կազմակերպութեան անդամները կոչուել էին «Հնչակեաններ», կազմակերպութիւնը՝ «Հնչակեան Կուսակցութիւն»: Յետագային, յեղափոխական կազմակերպութիւնը որդեգրել էր՝ «Սոցիալ Դեմոկրատական Հնչակեան Կուսակցութիւն» անունով: 1896 թուականին, Լոնտոնում, կուսակցութեան գաղափարախօսութեան եւ արեւմտեան Հայաստանի ազատագրական պայքարի հարցերի տարակարծութիւնների պատճառով այն պառակտուել էր երկու հոսանքների՝ «Վերակազմեալ Հնչակեաններ» եւ «Յախակողմեան-Ընկերվարական Հնչակեաններ»:

Հեռու արեւմուտքից, իրենց նախնիների երկիրը ազատագրելու ելած երիտասարդների մտքերի անդաստաններից յառնած յեղափոխութեան ոգու հովիկները, բազմած փերիների թեւերին, հասել էին Բիւզանդիոն, Արմին-հայերի աշխարհ, Ռուբինեան իշխանների չքնաղ երկիր Կիլիկիա: Բիւզանդիոնի եւ երկրի այլ բնակավայրերի ուսեալ ու աշխատաւոր Արմին-հայեր, որոնց սրտերում Հայոց աշխարհի ազատագրական պայքարի տենչն էր բռնկել՝ մտել պայքարի շարքեր: Հազար-հազար անձնազոհ մարդիկ գէնք վերցրել, ելել երկրի ազատագրութեան կռուին:

Մասունում, Զէյթունում, Շատախում, Վասպուրականում, Վանում, Շապին-Գարահիսարում, Մուսա Լեռում եւ այլուր կռիւ տուին թուրքին, սպաննեցին նրա յոխորտանքը, արիւն տեսաւ թշնամին, սարսափեց, բանակ բերեց լեռներ, շատ էին: Այդպէս չի լինի ասացին, անհրաժեշտ է ամբողջ Արմինահայաստան երկիրը յեղափոխութեան խարոյկներով շառագունել, գէնքի հազար-հազար համագորկների պայթիւնների որոտներով կռիւ տալ դուշմանին, ազատութեան հողմեր մռնչէին Արմինահայերի լեռներում, հայոց պատերազմի ու յաղթանակի աստուած Վահագնի շանթերի ոգին կռուի տանէր Արա աստուածոյ արեւորդիներին: Կուսակցութեան երդուեալներ երկրի շէներ գնացին՝ Արմինահայերին համընդհանուր յեղափոխութեանը նախապատրաստելու:

Մուսա լեռան լանջերին, որպէս երկնքից ընկած աստղաբոյլեր շողշողում էին վեց Հայկական շէներ: Նրանց բնակիչները համառ ու յախուռն էին, գէնքի գործածութեան վարժ, հմուտ որսորդներ ու դիպուկ նշանառուներ էին: Հայոց Տիրոս արքայի յաղթական զօրքի հետ, Հայաստանի հարաւային կողմերից եկել բնակութիւն հաստատել մուսա քոչրերի լոյսով հրավառուած լեռան լանջերին: Հնչակեան ակնաւոր գործիչ Աղասին, 1890-ականների սկզբներին, 14 ընկերների հետ եկել էին Մուսա լեռան շէներ, նրանց մարդկանց նախապատրաստելու Հայաստանի ազատագրութեան համընդհանուր յեղափոխութեան կռուին: Նրանց մարդկանց սրտերին ազատագրական պայքարի ոգու խարոյկներ վառեցին, յորդորեցին պատրաստ լինել Հայոց կռուին: Հնչակեան գործիչների թուրքի դէմ ազատութեան կռուի ելնելու ոգու այդ կանչերն էին իրենց լեռներում դուշմանի դէմ մարտնչելու տենչի բոցեր վառել: Շատ անգամներ աւելի հզոր թշնամու զօրքի դէմ կռուի ելել, հինգ յաղթական ճակատամարտերի լուսապսակ ճակատներով հասել հեռու ծովի ափերի փարաւոնների երկիր: «Քսան պարոններ» էին ասում նրանց, այցելել էին շէների տներ, առանձին գրոցներով յորդորել պատրաստ լինել կռուի: Աղասին այցելել էր նաեւ Եօղունջու գիւղի Հապէշեան Գէրնեգի տուն: Նրան պատմել, որ ազատագրուած Հայաստանում թագաւոր պիտի լինի: Գէրնեգը, գեղջուկի պարզամտու-

# Հնչակեան Քսան Անմահների Ոգու Խոյեանքին

Շարունակուած էջ 14-էն

Թեամբ ասել էր, որ հայոց թագաւորը թող իրենց գիւղից լինէր: Աղասին հարցրել էր՝ ուր էր լինելու նրա նստավարը, Գէրնէզը պատասխանել՝ ահա այս սենեակում, ես պատշգամբում կը քնանամ, ինքն էլ այստեղ: Իրոք որ Հայոց ազատ աշխարհում «Թագաւոր թագադրեցին» Եօղունօլուգի Տէր Պետրոսեան գերդաստանի ժառանգ՝ Լեւոնին:

Հնչակեանների համընդհանուր կուռի ելնելու ոգու հովիկները հասել էին նաեւ Սիւնեաց Բակուր Նահապետի աշխարհի հարաւ՝ Մեղրի գաւառ: Նրա շէնի բնակիչ Մաթէոս Սարգիսեան-Փարամազը՝ գինուորագրուել էր Հնչակեան գաղափարախօսութեանը: Հայաստան աշխարհի ազատագրութեան կուռին մասնակից լինելու համար՝ թողել հայրենի երկրի շէն, թողել գործ ու տուն, կին, դուստր, հայր ու մայր, գնացել հրաջուրու հայոց կուռի շանթերի հրավառ լոյսում: Գնացել հասել արեւմտեան կողմն հայոց աշխարհի, նրա աշխատաւոր մարդկանց ազատագրական պայքարին գորավիզ կանգնելու, այրուելու նրանց ընդվզման փոթորիկների հնոցներում:

Հնչակեան կուսակցութիւնը չէր մասնակցել 1907 թուականի Փարիզի Երկր թուրքերի «Իթթիհատ Վէ Թերաքի» համաժողովին, ծանօթ էին նրանց հակահայ թաքուն գործելակերպին: Այդ համաժողովը նրանց առաջնորդեց թուրքեայում իշխանութեան գաւթմանը, գահընկեց արեցին Սուլթան Համիտին: Հնչակեանները չգործակցեցին Երկր թուրքերի հետ, երկրում ճանաչուեցին օրէնքից դուրս կուսակցութիւն: 1911 թուականին, Սելանիկ-Յուստանում կայացել էր «Իթթիհատ Վէ Թերաքի» («Միութիւն եւ Առաջդիմութիւն») կուսակցութեան «Գորշ գայեր» ոհմակի համաժողովը: Հայութեան բնաջնջման որոշում ընդունուել: Այն պիտի իրագործուէր գալիք համաշխարհային պատերազմի ընթացքում, թուրքիան Գերմանիայի կողքին մասնակից լինելու յաւակնութիւն ունէր: Տասնհինգերորդ դարում Իսպանիայի թագաւորութիւնը երկրից վճռուել էր հրեայ բնակիչներին: Նրանցից շատեր հասել էին յոյների երկիր: Ուրացել իրենց կրօնքը ու ծագումը, ժամանակի ընթացքում «Տէօնմէ» իսլամ թուրքեր դարձել: Ծագումով հայ եղած Ենիշէրիները աւելի դաժան էին քան իրենց տէրերը, Տէօնմէ հրեաների պղտորուած արիւնն էլ աւելի դաժան եղաւ քան բուն թուրքինը: Համաժողովում նրանց ընդունած որոշումները գաղտնի չէին մնացել Հնչակեան կուսակցութիւնից: Համաժողովին մասնակցած թուրքիայի «Իթթիհատ» կուսակցութիւնը, Իթթիհատի ընդունած որոշման մասին տեղեակ էր պահել Հնչակեանների ղեկավարութեանը:

1913 թուականի Սեպտեմբերի 13-ին, Ռուսիայի Կոնստանցա (Քիւստենջա) քաղաքում, գումարուել էր Հնչակեան կուսակցութեան 7-րդ ընդհանուր համաժողովը, որոշում էր ընդունուել ահաբեկել Իթթիհատական ղեկավար անձանց ոհմակը, կանխարգելելու համար գալիք պատերազմին թուրքիայի մասնակցութիւնը ու հայերի բնաջնջման նրանց ծրագրի իրականացու-



Սաթոս Սարգիսեան-Փարամազ

մը: Համագումարի ընդունած որոշման կատարումը յանձնարարուել էր իրականացնելու Փարամազին, նա համագումարին ներկայ չէր: Այն ոչ միայն Հնչակեան կուսակցութեան, այլ նաեւ հայ յեղափոխական պատմութեան ընթացքում կայացուած առանձնակի որոշում էր:

Փարամազ, Հայաստանի տարբեր շրջաններում էր, հայերին տոգորում էր ազգային-ազատագրական պայքարի, կուսակցութեանը տեղեակ պահում այնտեղ տիրող իրավիճակի մասին, որ «Իթթիհատի գուլումը չափ ու սահման չունի... հայութեան դահիճները սպասում են յարմար առիթի՝ հայոց ոչնչացման արհաւիրքը իրականացնելու համար: Պէտք է տնտնալ անմիջապէս հակահարուած տալու համար»:

1914 թուականի Յուլիսի Փարամազը Կոնստանդինուպոլսում էր: Նախապատարաստում էր համագումարի որոշումը իրականացնելու ձեռնարկումը: Համախմբում է Հնչակեան կուսակցութեան որոշանդամների, պարմանուհի Երանուհի Դանիէլեանին հաւաքագրում որպէս կապաւոր: Հնչակեանները չէին իմացել, որ Իթթիհատական եռեակը տեղեակ էր եղել իրենց համագումարի որոշմանը: Այդ մասին Համագումարի մասնակից՝ լրտես Արթիւր Եսաեանն էր հաղորդել Իթթիհատին: Արթիւրի կեանքի ապահովութեան համար, կառավարութիւնը նրան ապաստանել էր Ադանայի բանտ: Վրիժառու հնչակեաններ գտել նրան, մահապատժի ենթարկել: Որպէս անպէտք մարդ, Ֆրանսական իշխանութիւնը կարգադրել նրա դին աղբանոց նետել:

1914 թուականի Յուլիսի 16-ին, խմբի հաւաքի հանդիպման ատեն, Կոնստանդինուպոլսի ոստիկանութիւնը ձերբակալել էր Փարամազի խումբը, բոլորին կալանատուն տարել: Տապալուել էր հայութիւնը բնաջնջումից փրկելու ծրագիրը: Թուրքիայի արարչական Արմին-հայերը, իրենց իսկ բնօրրանում, իրենց հաւատքի խաչի հետ խաչուեցին, արդեօք վշտից չէին ծխացել Արմինա երկրի Նեմրութ, Վարազ, Թոնտրակ, Արտոս, Սիփանի յանգած հրաբուխները ...:

1915 թուականի Մայիսի 14-ին թուրքի պատերազմական ատեն: Դատում էին քսան բոցաշունչ ոգեղէն քաջերի, դատում էին միտք, ոգի, ազատութիւն: Դատում էին, որպէսզի մարէին նրանց գաղափարի ճախրանքը, հայրենիքի ազատագրութեան լոյսը, որ միջնէր Արմինա երկրի կապուտակ երկնակամարը: Նրանք, իրենց գրախտիկ

լեռնաշխարհում բոցավառել էին ազգի ազատութեան կրակի լոյսը, հայոց աշխարհի փառքի հրաշէկ ոգու կանթեղը, որից ճառագած լոյսը շառագունել էր Ֆէտայի դարձած ռանչպարների ու հայրենիքի ազատագրութեան գոհուելու հազար-հազարների սրտերը: Քսանների մարտաշունչ, բոցավառ տրիբուն՝ հայկազուն Հնչակեան Փարամազը արեւավառ մրրկահաւի խոյեանքով դատապարտել էր դատողներին: Դատաւորների դիմաց, քսան Հնչակեան ընկերների հետ, յաղթ կանգնել էր Փարամազը, պաշտպանական ոգեշունչ ճառ էր արտասանել:


«Ի՞նչ չըրինք մենք այս դժբախտ երկրի երջանկութեան համար: Ի՞նչ անսահման գոհողութիւններու յօժարեցանք, ինչքան եռանդ ու արիւն չապարեցինք Հայ եւ թուրք եղբայրութեան իրականացման համար: Ինչպիսի գրկանքներ չառինք փոխադարձ վստահութեամբ գիրար բարձրացնելու համար: Ու ի՞նչ տեսանք ... Ոչ միայն դուք անտարբերութեամբ՝ ամբողջութեան դատապարտեցիք մեր ահագին ջանքերը, այլ գիտակցաբար հետամուտ եղաք մեր բնաջնջումին, մոռանալով, որ հայութեան բնաջնջուելը բուն իսկ թուրքիոյ կործանման համագոր է: Դուք քաջալերեցիք ոճիրն ու հարստահարութիւնները ու լռեցնել ջանացիք բողոքող մէն մի արտայայտութիւն: Դուք մեր կենսահիւթով ապրեցաք դարեր շարունակ եւ երբեք չուզեցիք, որ հիւթին աղբիւրը իրաւունք ունենար ապրելու եւ արտադրելու: Դուք ճնշեցիք եւ ողբալի համբերատարութեամբ կը հանդուրժէինք ամէն ստորացում: Դուք ահաբեկեցիք մեզ՝ երբ օր մը ուզեցինք թելմաշ գոյութիւն մը խնդրել մեր իշխանաւորներէն: Դուք զայրացաք երբ Արեւմտեան քաղաքակրթութեան սերմերը ուզեցին աճեցնել՝ մեր ու ձեր ապագան երաշխաւորելու: Դուք մեզ ջարդել սկսաք երբ օրին մէկը վճռեցինք մեր արժանապատուութեան համապատասխան դիրքի վրայ բարձրանալ: Դուք մեզ օրէնքի պաշտպանութենէն դուրս ձգեցիք, երբ Միդհատեան պոչատ սահմանադրութեան արտօնած իրաւունքներէն օգտուելու ուզեցինք: Պարոններ՝ դատեցէք մարդիք իրենց գործերով, իրենց աւանդութիւններով՝ իրենց գաղափարական կալուածի մէջ: Ես անջատողական չեմ այս երկրի հանդէպ, ընդհակառակը, ինքն է որ կ'անջատուի ինձմէ, չկարենալով հաշտուել զիս ոգեւորող գաղափարներուն հետ: Եւ ես կը ներեմ իրեն, առանց պահաջելու որ ինք ալ ինձ ներէ, թէեւ փիլիսոփայ մը ըսած է՝ «Լաւ է տասը յանցաւորի ներել, քան թէ անմեղ մը դատապարտել»: Փարամազը շարունակել էր՝ «Մենք սոցիալ դեմոկրատներ ենք, մեր հայրենիքը աշխարհն է, մեր ազգը ամբողջ մարդկութիւնն է... մենք մեր գաղափարները տարածել ենք հաւասարաչափ եւ հային եւ թուրքին, եւ ասորիին, եւ ցանկացած այլ ազգի ներկայացուցիչին:

Ատենի վերջին նիստին նախագահողը իր ելույթում ասել էր. «Այս դատավարութիւնը իր մէջ ունեցաւ անսովոր եւ անօրինակելի բան մը: Անօրինակելի, այո, որովհետեւ ո՛չ դուք եւ ո՛չ մենք գիրար թափանցելու իմաս-

տութիւնը ունեցանք ... Չէք կրնար երեւակայել, էֆենտիներ, թէ այդպիսի դատութեամբ է, որ պիտի յայտարարեմ համոզմանս խորութիւնը ձեր մէջ ամբարուած անսահման հայրենասիրութեան մասին ... Ինչէր չէին կրնար ընել ձեզի պէս խանդավառ մարդիկ, եթէ հասարակական երջանկութեան տեսլականը ընդհանուր դրօշի մը տակ հետապնդուէր ... Ի՞նչ բարիքներ կրնային ծնիլ խուսափող իրար հասկացողութենէ մը, որուն ներփակ ծայրը տխուր է եւ միջին ...»:

Այո, անսահման հայրենասիրութիւնը եւ նրանց դաւանած գաղափարների նուիրման վեհութիւնը միաւորել էին այդ քսան պայծառ արեւորդիներին, որոնք չընկրկեցին կախաղանի առաջ, բոլորը միասին ըմպեցին մահուան դաւնազոյն բաժակը:

Պոլիս, Գում Գաբու թաղի քահանայ՝ Տէր Գալուստ Պողոսեանը խաղաղ ննջում էր, ո՛վ իմանար ինչ անուշ անուրջների մէջ էր ընկողմանել, երբ տան դուռն էին թակել, շտապել էր մօտենալ, եւ ի՞նչ... ոստիկաններ: Հրամայել էին հետեւիլ իրենց, յայտնել էին, որ «Պաշտօնդ կիրարկելու համար կը կանչուիք»: Առաջնորդել էին իրեն ոստիկանատուն եւ լպիրշ պաղարիւնութեամբ յայտնել, «Ձեր տաք գլուխներէն մի քանիներ, Հայաստանի անկախութեան ազատագրական պայքարի եւ մեծ ոճիր կատա-



Սարգիս Տիրունի

րելու ծրագրի համար դատապարտուածների մահավճիռը պիտի գործադրուի, հրաւիրել կրօնական պարտականութիւն կատարելու»:

Ժամն էր տասներկու, մութն էր գրկած սուլթանների պալատները, Պոսֆորի կայսր ջրերին սեւ էր իջել: Տէր Գալուստին առաջնորդել էին պատերազմական ատենան: Այնտեղ էին քսան հնչակեան արորդիները, այնտեղ էին ժամանել երկրի դատախազն ու այլ պաշտօնատարներ: Ատենը, նրանց մահուան դատապարտելու վճիռն էին ընթերցել... եւ բոլորը միաբերան կանչել էին՝ «Կեցցէ Հայաստան, կեցցէ Հայաստան»: Նրանք անգոր էին սպաննելու հայր արեւալոյս գաղափարները, արեւորդիների Հայաստան աշխարհի ազատութեան արբիւր երազանքը: Արմին հայի հանճարից յորդած շքեղագարդ պալատներ՝ Սուլթան Պալատի հրապարակ: Եռոտանի կախաղանափայտերն էին մահազոյց ցցուել, փայտերից կախուած պարանների օղակներ էին: Փարամազն էր քսան ընկերներին առաջնորդել

# Հայկական Ցեղասպանութենէն Ազատուած Հայ Որբերուն Կողմէ «Մամա» Կոչումին Արժանացած՝ Մարիա Ճագոպարնին Նուիրուած Յիշատակի Ոգեկոչում Սուլվէնկի մէջ

ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ

Կազմակերպութեամբ Մաշտոց Գոլէճի եւ Մարիա Ճագոպարնի բարեկամներու համախմբումին, Հայոց Ցեղասպանութեան 104-րդ տարելիցին առթիւ Կիրակի, Մայիս 5-ին, Գալիֆորնիոյ Սանթա Պարպարա գաւառի Սուլվէնկ քաղաքի Լուտերական Փեթանիա եկեղեցւոյ շրջափակին մէջ գտնուող՝ մեծանուն մարդասէր, հայ ժողովուրդի յաւերժական երախտագիտութեան արժանի դանիացի միսիոնարուհի, Եղեռնէն ճողոպրած հազարաւոր հայ որբերու կողմէ արժան և իրաւ կերպով «Մամա» կոչումին արժանացած՝ Մարիա Ճագոպարնի յուշարձանին շուրջ տեղի ունեցաւ չիշատակի ոգեկոչում: Նախքան հանդիսութիւնը, նոյն եկեղեցւոյ հովիւ՝ վեր. Քրիստոփորուհի, Ս. պատարագի աւարտին իմաստասիր քարոզով մը ոգեկոչեց Հայոց Ցեղասպանութեան զոհերուն և Մարիա Ճագոպարնի չիշատակը: Ընդհանրապէս հայկական և դանիական ծագումով հարիւրաւոր հաւատացեալներ, ըլլալէ եկեղեցւոյ մէջ և ըլլալ «Մամա» չի յուշարձանին շուրջ պատշաճ յարգանքով հետեւեցան արարողութեան և ձեռնարկի յայտագրին:

Յիշատակի այս հանդիսութեան բացումը անգլերէն լեզուով կատարելով, դոկտ. Կարպիս Տէր-Եղիայեան, յարգանքով նշեց 20րդ դարու առաջին ցեղասպանութեան 104-րդ տարելիցը, Չատագովեց այդ առթիւ Լուտերական Փեթանիա եկեղեցւոյ և հայ համայնքին միասնական գործակցութիւնը և նշելէ ետք, թէ հանդիսութեան ներկայ էր Սանթա Պարպարա գավառի քաղաքապետ Ճիւլիան Արիսթոն և Սան Լուի Օպիսիօ գաւառներու Community Health Foundation-ի վարիչ տնօրէն Ռոն Քէսսըլըն ու իր որդին, շարունակեց:

«Կանգնած եմ ձեր առաջ, որպէս թոռն ու ծոռը Աստուծոյ ծառայ մեծ հօրս և մեծ-մեծ հօրս, Հայ Առաքելական Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ խորհրդի, ուր ծառայեց նաեւ մեր նուիրեալ միսիոնարուհին՝ Մարիա Ճագոպարնի: Մեր շնորհակալութիւնը կը յայտնենք Աստուծոյ այս նուիրեալ ծառային, որ հազարաւոր հայ որբերու կեանքը փրկեց: Անոնցմէ ոմանք և անոնց բազմաթիւ շառաւիղները ներկայ են այսօր, այստեղ: Կ'ուզեմ, որ դիտեմք. մեր փրկիչ Յիսուս Քրիստոսի երկու առաքելները՝ Թադէոս և Բարթողիմէոս, առաջին դարուն եկան Հայաստան և քրիստոնէութիւնը քարոզեցին: Քրիստոսէ ետք 301 թուականին, Հայաստանը առաջին երկիրը եղաւ աշխարհի վրայ, որ պետականօրէն ընդունեց քրիստոնէութիւնը: 303ին, ըստ աւանդութեան, Քրիստոսի հրաշալի էջքով, Հայաստան աշխարհի մէջ հիմնուեցաւ Ս. Էջմիածինը, որ դարձաւ մեր հաւատքի կեդրոնը և որպէս այդպիսին կը շարունակուի մինչեւ այսօր... 451-ին, յանուն քրիստոնէութեան մղեցինք վարդանանց պատերազմը: 1915-ին մէկուկէս միլիոն հայեր վաշտագորէն շարժուեցան Օսմանեան թուրքիոյ կողմէ, որոնց կարգին իմ մեծ-մեծ հայրս և մեր անմիջական ընտանիքին 42 անդամները, ինչպէս նաեւ ձեզմէ շատերուն հարազատները»:

Դոկտ. Տէր Եղիայեան շեշտեց,



որ «հայ ժողովուրդը երբեք պիտի չմոռնայ իր սրբադասուած մէկուկէս միլիոն նահատակները: Մեր ազգի նահատակութեան որպէս անմիջական ազգեցողութիւն, Եւրոպայի և Ամերիկայի մէջ տարածուեցաւ քրիստոնէութիւնը: Մոխիրներէն յառնած հայ ժողովուրդն ու Հայաստանը, ազատագրուած Արցախը և Սփիւռքը միասնաբար պիտի շարունակեն իրենց պահանջատիրական արդար պայքարը մինչեւ վերջնական յաղթանակ»:

Արժ. Տէր Մովսէս քհնյ. Լաննաքեան փոխանցեց Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի գրաւոր պատգամը: Սրբազան Հայրը իր պատգամին մէջ ջերմօրէն նշելէ ետք Մարիա Ճագոպարնի մարդասիրական ու փրկարար անմոռանալի գուրգուրանքը, սէրն ու նուիրումը՝ հանդէպ հայ որբերուն, որոնց կարգին էր նաեւ թեմիս նախկին առաջնորդ՝ Գերշ. Տ. Սմբատ Արք. Լափաճեան, որ միշտ երախտագիտական ջերմ գգացումներով կը յիշէր «Մամա»ին: Ապա, Սրբազան Հայրը համակիչ բառերով պանծացնելէ ետք անոր չիշատակը, ըսելով որ հայ ժողովուրդը ոչ միայն պիտի չմոռնայ ցեղասպանութենէն ճողոպրած հայ որբերուն հանդէպ «Մամա» չի ցուցաբերած անփոխարինելի ծառայութիւնները, այլեւ միասնական ոգիով պիտի շարունակէ յարատեւօրէն պայքարիլ ցեղասպան թուրքիոյ ներկայ ղեկավարներու խուճափողական և ուրացման քաղաքականութեան դէմ, մինչեւ որ թուրքիա ընդունի իր յանցանքը և հատուցում կատարէ հայ ժողովուրդին:

Գործադրուեցաւ զեղարուեստական յայտագիր: Հանրածանօթ երգչուհի Մարալ Բարսեղեան հանդէս եկաւ անգլերէն և հայերէն փունջ մը հոգեւոր և հայրենասիրական երգերով, որոնց միացան նաեւ ներկայները: Իսկ տաղանդաշատ Չութակահարուհի տիկին Անժելա Ամիրեան հրամցուց կոմիտասեան զեղեցիկ երաժշտութիւն: Չոյզ արուեստագիտուհիները արժանացան ներկաներու ջերմ ծափահարութիւններուն և «պրաւօ»ներուն:

Սրտի խօսքեր արտասանեցին «Մամա» չի որբերէն, անոր որդեգրեալ դուստրը՝ Մարիա Գառնիկեան և գաղութիս նուիրեալ սպասարկու՝ տոքթ. Յակոբ Տիգրանեան: Իր կարգին շատ կարճ ելույթ մը ունենալով, Պր. Ռոն Քէսսըլ ըսաւ, թէ ինքզինք ուրախ և խիստ պատոււրած կը զգայ նման ձեռնարկի մը ներկայ գտնուելուն համար:

Ապա, Դոկտ. Տէր-Եղիայեան ամբիոն հրաւիրեց տոքթ վարդան թաշճեանը:

Շնորհակալութիւն յայտնելէ

ետք տրուած առիթին համար, տոքթ. Թաշճեան իր կարգին անգլերէնով ըսելէ ետք, թէ իր խօսքը պիտի ըլլայ այն հերոսական միսիոնարուհի կնոջ մասին, որուն անունը Մարիա Ճագոպարնի է, շարունակեց. «Առաջին Համաշխարհային Պատերազմի օրերուն, դանիացի այս միսիոնարուհի բուժքոյրը խորհրդի մէջ կը ծառայէր ամերիկեան հիւանդանոցին մէջ, երբ օսմանեան վարչակարգը սիւստեմատիկօրէն կը ծրագրէր Արեւմտահայութեան բնաջնջումը: Հազարաւոր հայ որբեր դարձած էին անտունի, անպաշտպան և ենթակա իրենց ծնողներու ճակատագրին՝ ոչնչացման: Ինչպէս սուրբ-րական Դաւիթի և Գողթի, նման պայքար մը դիմակալելու հարկին տակ էր նաև Մարիան, այն տարբերութեամբ որ մէկ Գողթի փոխան՝ բազմաթիւ թուրք գիւնուորներու ամենօրեայ սպառնալիքները պէտք էր դիմակալէր ան: Պայքար մը, զոր հերոսականօրէն տարաւ ան, փրկելով հարիւրաւոր որբեր և զանոնք հասցնելով Լի-


բանանի ծովեզերեայ Պիպլոս քաղաքը, ուր հիմնեց որբանոց մը՝ «Թուշնոդ Բոյն» անունով, ուր որբերը իրենց փրկարար հրեշտակը կոչեցին «Մամա»: Այստեղ ան իրենց հայթայթեց ուտելիք, ապաստանարան, առօրեայ կրթութիւն, եկեղեցի՝ որբանոցի տարածքին մէջ և ուր զանոնք պատրաստեց որպէս մարդկային ընտիր հակներ:

«Որպէս ամէնուրեքեան դէմք թուշնոց Բոյնի մէջ, ան դարձաւ մտատիպար մը մինչեւ 1960 թուականը, երբ ան կնքեց իր մահականացուն և համաձայն իր ցանկութեան, թաղուեցաւ Թուշնոց Բոյնին մէջ: Յետագային «Թուշնոց Բոյն» մտաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին ներքեւ, ծառայելով որբերուն և պատերազմի զոհերուն և անջատուած ընտանիքներուն:

«1970ին, երջանկալիշատակ խորէն կաթողիկոսի խնդրանքին ընդառաջելով, կնոջս հետ այցելեցի Թուշնոց Բոյն, որբերուն տարեկան ֆիզիքական քննութիւնները կատարելու, որ կը պահանջուէր լիբանանեան առողջապահական նախարարութեան կողմէ: Այդ առթիւ, ես մինչև իսկ ֆութպոլ խաղացայ որբերուն հետ: Եւ, գիտէ՞ք ինչ... պարտուեցայ իրենցմէ»:

Յարգելի տոքթորը, ըսելէ ետք թէ Մարիա Ճագոպարնի կեանքը կանուխէն՝ փոքր տարիքէն զինք խորապէս ներշնչած է և յետագային, բժիշկ դառնալէ ետք, զինք մղած է մարդասիրական, բարեսիրական ծառայութիւններու՝ Լիբանանէն մինչև Քանաթա և Ամերիկա, եզրակացուց. «Իբրեւ բուժքոյր, երբ իր կեանքը ի սպաս դրաւ մարդկայնական առաքելութեան,

Շար.ը էջ 19



Monrovia-ի Dignity գերեզմանատան մէջ պիտի տրամադրուի յատուկ Հայկական բաժին մը որուն անունը պիտի ըլլայ Արարատ:

**Ճատ լաւ պայմաններով եւ յարմար ամսական վճարումներով:**

Նախքան Ձեր ծրագրերուն ու առաւելութիւններուն համար Ձեզի կատաշարկով՝


- 1- Ձեր պայմաններուն եւ ծախսերու հարմար ծառայութիւններ
- 2- Ունիք Ըսելու թաղման ու յուղարկարարութեան ծառայութիւններ յարմար գիւններով

---

Մանրամասնութեան համար դիմել՝

**ISABEL CRISTINA KEMANIAN**  
Pre-Planning Advisor

200 E. Duarte Rd., Monrovia, CA 91016  
(818) 284-8754  
Email: isabel.kemania@sci-us.com





### Ի՞նչպէս Յետեւիլ Ջուր Խմելու Հասարակարգին

Բոլորը գիտեն, թէ որքան կարեւոր է սնունդի հասարակարգին հետեւիլը: Նախաճաշ, ճաշ եւ ընթրիք. ասոնք սնունդ ընդունելու պարտադիր հասարակարգն են: Եթէ ասոնց աւելցնեն նաեւ երկու թեթեւ ճաշ, պիտի ըլլայ կատարեալ կոտորակային սննդակարգ:

Բոլորը գիտեն նաեւ, թէ որքան կարեւոր է օրուան ընթացքին բաւարար քանակով հեղուկ ընդունելը, այսինքն՝ ջրային հաւասարակշռութիւնը պահպանելը: Բաց քիչերը տեղեկացուած են այն մասին, որ ջուրն ալ կարեւոր է համապատասխան ժամերով խմելը:

Խմելու հասարակարգի կազմակերպում.

Վատ ինքնագզացողութիւնը, գլխացաւերը, յոգնածութիւնը յաճախ կը հանդիսանան մարմնի ջրազրկման արդիւնք: Միջին վիճակագրական չափը, որ անհրաժեշտ է մարդուն օրական խմելու համար, կը կազմէ մօտաւորապէս 1.5 լիթր: Այդ ցուցանիշը կրնայ փոփոխուիլ՝ կախած կլիմայէն ու սննդակարգին մէջ ալ հեղուկներու կամ հեղուկ պարունակող սննդատեսակներու՝ հիւթեր, ապուրներ եւ այլն:

Խմելու հասարակարգի կազմակերպումը շատ կարեւոր է նիւհարնալ ցանկացողներուն համար: Ատիկա կ'օգնէ կարգաւորելու նիւթափոխանակութիւնը: Նիւհարնալու համար խմելու հասարակարգը ունի հետեւեալ տեսքը՝ ժամը 08:00-ին. Պէտք է խմել երկու գաւաթ տաք կիտրոնաջուր անօթի ստամոքսին: Այդպիսի ըմպելիքը կ'առօրեայցնէ, կ'օգնէ արթննալ ու ստամոքսը կը տրամադրէ աշխատելու, կը ձեւաւորէ անհրաժեշտ միջավայր սնունդ ընդունելու համար:

20 վայրկեան անց կարելի է նախաճաշել:

Ժամը 11:00-ին. Պէտք է խմել

մէկ գաւաթ սենեակային ջերմաստիճանի ջուր: Այդ ժամուն ջուր խմելը կը նշանակէ՝ ախորժակը բթացնել: 20 վայրկեան անց կարելի է թեթեւ սնուիլ: Այդ ժամանակ ճաշին այդքան շատ չես ուտեր ու չես ուտեր աւելի, քան անհրաժեշտ է մարմինիդ կենսագործունէութիւն ապահովելու համար:

Ժամը 13:00-ին. Ճաշէն 30 վայրկեան առաջ պէտք է խմել սենեակային ջերմաստիճանի մէկ գաւաթ ջուր՝ կտոր մը կոնապոպեղով: Թէեւ շատ սննդաբաններ կ'ըսեն, որ ուտելու պահուն աւելի լաւ է չիմել, սակայն քիչ քանակով ջուրը դրականօրէն կ'ազդէ մարտդական գործընթացներուն վրայ:

Ժամը 16:00-ին. Եթէ ճաշի ու ընթրիքի միջոցին ուտելու թեթեւ բան չկայ, պէտք է խմել կէս լիթր սենեակային ջերմաստիճանի ջուր: Իսկ եթէ այդ ժամուն ուտել կը ծրագրէք, խմեցէք մէկ գաւաթ ջուր: Ջուրը խմելէն 15 վայրկեան ետք կրնաք թեթեւ սնուիլ՝ ուտելով, օրինակ, աղցան, ձուկ: Պտուղն ու քաղցրը ճաշէն յետոյ արդէն աւելի լաւ է չօգտագործել:

Ժամը 20:00-ին. Պէտք է խմել 1 գաւաթ սենեակային ջերմաստիճանի ջուր: Կարելի է ջուրին մէջ աւելցնել կտոր մը կիտրոն ու քիչ մը հեղուկ մեղր: Այսպիսի համադրութիւնը կ'օգնէ մարսելու ընթրիքը:

Մտնողի քանակն ու ջերմութիւնը նուազեցնելով՝ դուք պիտի նիւհարնաք: Սակայն հետեւելով նաեւ խմելու հասարակարգին՝ դուք աւելի առողջ պիտի ըլլաք: Մարմինը պիտի մաքրուի, եւ սլացիկութեան հետ մէկտեղ՝ պիտի լաւանայ նաեւ դէմքին գոյնը, մաշկին եւ մազերուն որակը:

Խմելու հասարակարգին հետեւիլը կը լաւացնէ ինքնագզացողութիւնը:

### 5 Բան, Որ Կը Սպաննէ Սեր Ինքնավստահութիւնը

Խորհուրդներ բոլոր անոնց, որոնք կը փափաքին շատ բանի հասնիլ, բաց վստահ չեն, որ յաջողութիւնը պիտի ժպտի իրենց: Ինքնավստահ մարդիկ միշտ հիացմունք կ'առաջացնեն:

Նայելով անոնց՝ կը ստեղծուի այնպիսի տպաւորութիւն, որ այդպիսի մարդոց մօտ ամէն ինչ յաջող է, քանի որ իրենք կը հաւատան սեփական ուժերուն: Իրականութեան մէջ, անոնք պարզապէս գիտեն, որ պէտք է վանել վատ զգացմունքներն ու յոյսերը, որոնք կը խորտակեն ինքնագնահատականը:

1) Համեմատութիւն: Մանկութենէն մենք մշտապէս կը մրցինք ուրիշներու հետ: Սակայն, անհար է յաղթել բացարձակապէս բոլորին: Փոխարէնը, կրնաք հարցնել դուք ձեզի, թէ արդեօք դուք ձեզ կը համարէք դուք ձեր լաւագոյն տարբերակը: Ատիկա ընելու համար անհրաժեշտ է արձեւանել ձեռքդ սեփական ուժիդ եւ թոյլ կողմերը:

Եթէ դուք իսկապէս կ'ուզէք անընդհատ յաղթել, ըլլալ աւելի լաւը, քան երէկ, պէտք է շատ ուժ վատնէք ինքնակառավարման զարգացման վրայ: Ժամանակ չի մնար, որ դուք համեմատուիք ուրիշներու հետ:

2) Անցեալի անյաջողութիւնները: Հսկայական քաջութիւն պէտք է անցեալի սխալներու եւ անյաջողութիւններու հետ համակերպուելու եւ նոր բարձունքներ նուաճելու համար:

Կեդրոնացէք միայն յաղթելու մտքին վրայ եւ թոյլ մի տաք, որ անցեալի ստուերը շեղէ ձեզ ձեր նպատակէն:

3) Անպատրաստութիւն: Ամէն օրը մեզի հնարաւորութիւն կու տայ պատրաստուելու ապագայ յաղ-

թանակներուն: Յաղթողի նման ապրելու համար պէտք է մտածել յաղթողի նման: Իւրաքանչիւրը, որ մէկ անգամ կը դառնայ յաղթող, գիտէ որ ինչ աշխատանք տարուած է ատոր համար:

Դուք պատրաստ էք չարչարուելու: Դուք պատրաստ էք արդիւնքի համար անյարմարութիւններ կրելու: Եթէ այդ, ուստի սկսէք աշխատիլ ապագայ յաղթանակներու համար արդէն այսօր: Վստահութիւնը կու գայ փորձառութեան եւ ձեռք բերած ունակութիւններուն հետ մէկտեղ:

4) Վախ: Քննադատուելու վախը այն չարիքն է, որ թոյլ չի տար մեզմէ շատերուն հասնիլ ցանկալի արդիւնքի: Իրականութեան մէջ, շրջապատի կարծիքը չ'ունենար որեւէ ուժ, եթէ դուք չի տաք անոր մեծ նշանակութիւն: Այն, ինչին դուք կը հաւատաք, աւելի կարեւոր է որեւէ անհանգստութենէ եւ վախէ:

5) Բացասական մտածողութիւն: Երբեք մի մոռնաք, որ դուք ունիք հազար հնարաւորութիւն: Հեռացուցէք այն մտքերը, որոնք ձեզ կը տանին դէպի կործանում եւ կ'առաջացնեն անյուսու թիւն:

Սորվեցէք մտածել կառուցողական, քանի որ ոչ միայն ձեր ներկայ տրամադրութիւնը, այլեւ ձեր ապագան կախեալ են անոնցմէ:

Յիշեցէք, որ ինքնավստահութիւնը ոչ միայն յաղթական շարքի արդիւնք է, այլեւ՝ մեծապէս անոր պատճառը:

Դուք բաւականին ուժեղ, խելացի եւ աշխատունակ էք, որպէսզի հասնիք այն ամէնուն, ինչ կ'ուզէք: Իսկ եթէ այդպէս է, ապա դուք կ'ապագայուիք ոչ մէկ առիթ ունիք:

### Մաղաքիա Պատրիարք Օրմանեան

Շարունակուած էջ 13-էն

հասնող հատոր մը իր ընդարձակութեամբ, պարզաբանութեամբ, անճշդութիւններու սրբագրութեամբ, եւ խորթափանց մեկնաբանութեամբ:

1875-ին լոյս տեսած էր Ներսէս Պատրիարք Վարժապետեանի «Ուսումն Համաբարբառ Աւետարանի Տեսուն Մերոյ» 740 էջոց հատորը՝ սպառնալով Արմաշու վանքի տպարանին մէջ, ուր Վարժապետեան իր կանխաբանութեան մէջ կը ճշդէր թէ «բաւական համարելով հնոց եւ նորոց կարեւորագոյն բացատրութիւններն ընտրանալ համառօտել եւ չորից սրբոց Աւետարանչացի վաղուց անտի ընկալեալ համաձայնութեամբ ի լոյս ընծայել», յուսալով որ իր անկատար գործը «խայծ մը կամ քաջալերութիւն մը պիտի ըլլար իմաստնախոհ եւ կարողագոյն անձանց՝ աւելի աղէկը գրելու»: Օրմանեան նոյն Ներսէս Պատրիարքի քաջալերանքով եւ օրհնութեամբ Մայր Եկեղեցու գիրկը վերադարձած էր, որ տեղեակ ըլլալով անոր գիրքի մասին, աւելի ուշ ինք եղաւ իր հովանաւորին «իմաստնախոհ եւ կարողագոյն» անձը որ ի նորոյ գրեց իր «Համապատում»ը, գիտական հմտութեամբ, տրամաբանական կառուցող եւ իմացական թափանցումով:

Այս կարեւոր երկին մէջ Օրմանեան Սրբազան Չորս Աւետարաններէն ոչ իսկ համար մը զանց առած է: Ընդհակառակը, տիրական

հմտութեամբ, անվրէպ չիշողութեամբ, եւ համապարփակ համադրութեամբ կրցած է ձուլել Աւետարաններու ամբողջ պարունակութիւնը ու զայն վերածել պատմական եւ դաւանական միաւորի մը: Մեր ուսանողութեան շրջանին գիրքը հրատարակուեցաւ Անթիլիասի տպարանէն 1953 թուին երբ մեզի յանձնարարուեցաւ տպագրութեան սրբագրութիւնները կատարել, եւ հրատարակութենէն ետք տողերս գրողը եղաւ առաջին գրախօսականը ստորագրողը «Հասկ» ամսագրին մէջ 1955 թուականին:

### Ժամանակագրութիւնը Յեղինակին Սօս

Ժամանակագրութիւնը ողնայարն է պատմութեան, եւ Օրմանեան իր «Ազգապատում»ներու երեք հատորներուն մէջ այս անփոխարինելի սկզբունքը առաջնորդ ունեցած է, ճիշդ ընելով աղբիւրներու երբեմն յստակ եւ շատ անգամ անորոշ տուեալներով ճշդել թուականներ, դէպքերու յարաբերութիւններ, եւ անճշդութեանց յայտնաբերումներ: Յայտնի է որ հայերէն գրաւոր պատմագրութիւնը խառն եւ թերի տուեալներ շատ ունի, որուն համար գիտական ճիշդ, աղբիւրներու բաղդատութիւն եւ ձեռագրագիտական հասկացողութիւն անհրաժեշտ են հեղինակին համար: Օրմանեան Պատրիարք իր ժամանակագրութիւնը ճշգրտելու փորձերն լծուած է՝ օգտագործելով հայ եւ օտար քննական ուսումնասիրութիւններ:

### Արտայայտութիւններ, Ձորս Երջանիկ Ձոյգերը Իրարու Կ'ըսեն Ամէն Օր

Պարզ խօսքեր՝ յաւերժ սիրոյ համար: Հոգեբաններ վստահ են, որ անգամ հասարակ արտայայտութիւնները կրնան գոյգերու ներդաշնակութեան բանալին ըլլալ:

Անոնք կը պարզաբանեն, որ յարաբերութիւններուն մէջ ամէնէն յաճախ հանդիպող ինդիքներէն մէկը հաւասարակշռութեան իրախտումն է. մենք միմեանց կը ծանրաբեռնենք դիտողութիւններով, կը լռենք վիրաւորանքներու մասին եւ բոլորովին կը մոռնանք սիրոյ եւ աջակցութեան խօսքեր հնչեցնելու մասին:

Հոգեբանները կը պնդեն, որ երկուստեք երջանիկ ըլլալու համար՝ սիրելիի հետ առօրեայ խօսակցութեան պէտք է աւելցնել երկու արտայայտութիւն. «շնորհակալութիւն» եւ «ներէ գիս»: Առաջին

հայեացքով այս բառերը կրնան պարզագոյն թուիլ, սակայն անոնք բարի կամեցողութեամբ ազնիւ յարաբերութիւններու հիմքն են: Կարեւոր է երախտագիտութիւն յայտնել ձեր ամուսինին կամ զուգընկերոջ եւ կարեւոր ներողութիւն ինդիքն այն ցաւին համար, որ անոր պատճառով էք: Ատիկա գոյգէն իւրաքանչիւրին կը յիշեցնէ, որ ձեր յարաբերութիւնները սարդոստայն չեն, այլ՝ յատուկ երեւոյթ մը: Սիրելի մարդու կողքին ըլլալը մեծ յաջողութիւն ու երջանակութիւն է. ասիկա պէտք է մոռնալ:

Բնականաբար, հարկ չկայ ձեր գուզընկերը հեղեղէք շնորհակալական խօսքերով ու ներողութիւններով. չ'արժեք անոնց թեթեւամտօրէն վերաբերիլ՝ սպասեցէք ճիշդ պահուն:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՎԱՍԱՐ)  
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**(626) 797-7680**

### Քսաններու Նահատակութեան 104-ամեակ

Շարունակուած էջ 8-էն

հարցերը, այլ երկրին մէջ խորացուցին դասակարգային անարդարութիւնը, ժողովուրդը բաժնելով մեծաթիւ աղքատ գանգուածի եւ փոքրաթիւ հարուստ իշխանաւորներու:

Ընկ. Քէօշկէրեան նշում կատարեց անկախ Հայաստանի դիմագրաւած շարք մը խնդիրներուն եւ ծանրակշիւ միջադէպերուն՝ ներառեալ 1999-ի Հոկտեմբեր 27-ի ոճիրը, 2008-ի Մարտ 1-ի դէպքերը եւ ապրիլեան քառօրեայ պատերազմը, որոնց մանրամասնութիւնները եւ պատասխանատուութիւնները տակաւին չեն բացայայտուած: Ան բնական համարեց, որ Հնչակեան կուսակցութիւնը գորակցէր վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխավորած 2018-ի ժողովրդային շարժումին ու թաւաշեայ յեղափոխութեան, որուն նպատակն էր արմատախիլ ընել փտածութիւնը պետական համակարգէն, բարձրացնել բնակչութեան կենսամակարդակը, ամրապնդել ժողովրդավարութիւնը, երաշխաւորել խօսքի եւ այլ ազատութիւնները, անկախացնել արդարադատական համակարգը, հաշուեյարդարի ենթարկել երկիրը ծանր կացութեան մղած նախկին բոլոր պատասխանատուները:

Գնահատելով հանդերձ Հայաստանի մէջ անցնող տարուան ընթացքին նկատուած դրական փոփոխութիւնները՝ ներառեալ Արցախի հարցի լուծման առնչութեամբ նոր քաղաքականութիւններու որդեգրումը եւ օրէնքի գերակայութեան վիճակի ամրապնդումը, Ընկ. Քէօշկէրեան նշում կատարեց շարք մը թերութիւններու, մասնաւորաբար Սփիւռքի նախարարութիւնը չեղարկելու որոշումին, քատրային որոշ անյաջող նշանակումներուն եւ մանաւանդ հարկային նոր օրէնքի վաւերացումին, որ կրնայ վնասել աղքատ եւ միջին դասակարգերու շահերուն, սահմանափակելով երկրին տնտեսական աճը: Ընկ. Քէօշկէրեան ողջունեց ներկայի երիտասարդ եւ հայրենասէր իշխանութիւններու լուրջ փորձերը՝ տարիներու սխալները ճշդելու ուղղութեամբ, սակայն գզուչացուց աղքատ եւ միջին դասակարգի պատկանող քաղաքացիներու շահերը վտանգելէ:

Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի շրջանի վարիչ Մարմինի խօսքը արտասանեց ատենապետ Ընկ. Սեպուհ Գալփաքեան: Ան դիտել տուաւ, որ Քսաններու նահատակութեան օրը ուխտի վերանորոգումի օր է. այն ուխտին, որ մենք յանձնառու դարձած ենք անսակարկօրէն ծառայելու մեր ժողովուրդին: Ընկ. Գալփաքեան նշեց, որ Քսաններու նահատակութիւնը մեզի համար ոգեշնչող հերոսական պատմական եղելութիւն մըն է, որուն նմանը գրեթէ գոյութիւն չունի մեր ժողովուրդի պատմութեան մէջ: Ան շեշտեց, որ այն կուսակցութիւնը, որ բազմահազար նահատակներ տուած է իր ժողովուրդի բարօրութեան համար, ռեւէ մէկէն բարենիշ չ'ակնկալեր, որովհետեւ իր անբիծ

անցեալը անուրանալի ապացոյց մըն է այս առումով:

Ընկ. Սեպուհ Գալփաքեան ապա անդրա դարձաւ լիբանանահայ իրականութեան եւ շեշտեց, որ գաղութը կը գտնուի արագընթաց վայրէջքի մէջ, որովհետեւ գաղութին մէջ գոյութիւն չունի լիարժէք միասնականութիւն, ներդաշնակութիւն եւ համընդհանուր շահերու հետապնդում: Վկայակոչելով անցեալ տարուան Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններուն արդիւնքները՝ Ընկ. Գալփաքեան հարց տուաւ, որ այսօր ո՞վ կը ճանչնայ նորընտիր երեսփոխանները, ո՞ւր են անոնք, որո՞ւն հաշուետու են եւ ի՞նչ աշխատանք կը տանին լիբանանահայութեան իրաւունքները պաշտպանելու առումով: «Անոնք որոնք կ'ուզեն մեզ համոզել, որ իրենք յաղթական դուրս եկան ընտրութենէն, կը սխալին: Անգամ մը եւս փաստուեցաւ, որ անկեղծ էր միասնականութիւնը եւ նեղ կուսակցական շահերը գերիշխող էին»: Այս հարցին որպէս եզրակացութիւն, Ընկ. Գալփաքեան յայտնեց, որ Հնչակեան կուսակցութիւնը, դէմ ըլլալով հանդերձ յարանուանութիւններու քաղաքականացումին, ճիշդ կը համարէ ընտրական օրէնքը հիմնել Լիբանանը մէկ ընտրատեղամասի վրայ, ուր իւրաքանչիւր համայնք կ'ընտրէ իր երեսփոխանները՝ համեմատական դրութեան հիման վրայ: «Այս գուցէ միակ օրէնքն է, որ լիբանանահայութեան խօսքը ազուր կը դարձնէ ընտրութիւններուն ընթացքին: Այլապէս, ուրիշներ մեր փոխարէն պիտի ընտրեն մեր ներկայացուցիչները, տարբեր գործօններ շահագործելով», գզուչացուց Ընկ. Գալփաքեան:

Ան եզրակացուց, որ լիբանանահայութեան նաւը սկսած է ճաքեր տալ եւ եթէ այդ նաւը ընկղմի, ապա ոչ ոք պիտի փրկուի, նոյնիսկ անոնք, որոնք իրենք գիրենք նաւուն վերնամասը կը կարծեն: Ան կոչ ուղղեց ապակուսակցականացնելու ազգային հաստատութիւնները եւ յարգելու միմիանց, որովհետեւ պահը կը պահանջէ լրջութիւն:

Ապա, Լիբանանի շրջանի վարիչ Մարմինը յուշանուէրներով պարգևատրեց Ընկ. Սարգիս Սարգիսեանը եւ Ընկ.Տի Մաքրուհի Թաթուլեան խաչատուրեանը, որպէս Հնչակեան կուսակցութեան Լիբանանի շրջանի արժանաւոր երիցագոյն շարքայիները:

Մանկավարժ եւ գիրքերու խմբագիր Ընկ.Տի խաչատուրեան երկար տարիներ վարած է ՀՄՄ-ի Օրիորդացի ատենապետութիւնը, Ազգային Ռուբինեան վարժարանի տնօրէնութիւնը, եղած է ՍԴՀԿ «Մարտի Նազարէթեան» մասնաճիւղի վարչական եւ յօդուածագիր՝ «Արարատ» օրաթերթին մէջ: Իսկ Ընկ. Սարգիս Սարգիսեան եղած է Հնչակեան կուսակցութեան եւ Հայրենիքի միջեւ մերձեցումի աշխատանքին գլխաւոր սատարողներէն մէկը: Ան ստանձնած է կուսակցական գանազան պաշտօններ: Այս առթիւ, Ընկ.Տի խաչատուրեան յղեց իր սրտի խօսքը:

### Հնչակեան Քսան Կախաղաններ

Շարունակուած էջ 8-էն

րէնուհի, Ընկ.Տի Անի Սարաֆեան եփրեմեանը, որ յատուկ այս առթիւն համար հրաւիրուած էր Լիբանանէն:

Ան տպաւորիչ եւ յուզիչ կերպով ներկայացուց կախաղաններու նախօրեակին, Գոռմ Գալփաքեան հանաներէն Տ. Գալուստ Պօղոսեան քահանայի վկայութիւնը, մէջբերելով քանի մը տող Գառնիկ Աղդարեանի «Պայազիտ» բանաստեղծութենէն, որմէ ետք աւելցուց, որ «Քսան կախաղաններու յիշատակը թանկագին է մեզի համար իր խոր բովանդակութեամբ: Այնտեղ մենք կը տեսնենք հայ յեղափոխական մտքի խորքը, ծաւալը, սահման չճանչցող խիզախութիւնն ու ինքնագոհութիւնը: Սուլթան Պայազիտի կախաղաններէն առաջ եւ անկէ յետոյ ծաւալուած հնչակեան յեղափոխական շարժումները, որպէս թանկագին աւանդութիւն իր մտքին եւ սրտին մէջ այսօր կը կրէ հնչակեան երիտասարդութիւնը:

Իւրաքանչիւր հնչակեան երիտասարդ հպարտ է՝ առաջին հերթին անցեալի իր հերոսներու փառքով, յեղափոխական գործունէութեամբ, բիւրեղացած գաղափարականով եւ հայրենասիրութեամբ: Արդ, Հնչակեան երիտասարդը ուր որ ալ գտնուի, աշխարհի տարբեր ցամաքամասերու վրայ, այսօր գիտակից է իր կոչումին: Գաղափարական եւ յեղափոխական հարուստ աւանդութիւններով գտնուող Հնչակեանը ուրիշ ուղի չի կրնար ունենալ իրեն համար, բացի կուսակցութեան ճշմարիտ ուղիէն, ինչքան ալ փշոտ ու դժգոհ ըլլայ այդ ուղին: Գաղութներու մէջ երեւան եկած աննպաստ պայմանները յուսահատութեան չ'առաջնորդեր փրամագներու շունչով տոգորուած Հնչակեանը: Ոգեկոչելով Քսանները մենք կ'ընծայենք արժանի պատիւ հայ ազգին եւ Մայր հայրենիքին. այն հայրենիքին, որ խաբրիսն է մեր գոյութեան եւ երաշխիքը՝ մեր պայծառ գալիքին, որ տեսիլքն էր Պայազիտի հերոսներուն:

Ընկերուհին շարունակելով իր խօսքը ըսաւ, - «Կ'ոգեկոչենք Քսանները նաեւ վերահաստատելու համար, որ իրենց գործը կը շարունակուի, որ իրենց նահատակութենէն 104 տարի ետք, հայ ժողովուրդը այսօր համախմբուած կը կանգնի իր արդար հողին վրայ, բարձրաձայն ըսելով, որ մենք ենք տէրը մեր երկրին: Այն երկրին, որ մէկ օրուան մէջ փոխակերպուեցաւ,

թաւաշեայ անարիւն յեղափոխութիւնը իրականացաւ: Հարիւր հազարաւոր քաղաքացիներ ելած էին վճռական պայքար մղելու՝ տասնամեակներով ոտնահարուած իրենց իրաւունքները վերականգնելու եւ անոնց տէրը դառնալու վճռականութեամբ: Մարդիկ փողոց ելած էին աղքատութեան, փտածութեան, գանձագողութեան եւ տնտեսութեան մէջ գերիշխող դիրք ունեցող ստուերային ու մենաշնորհային համակարգին դէմ:

«Քաղաքական, քաղաքացիական եւ բարոյական զարթօնքը, որ կը թեւածէ այսօր հայոց երկինքին տակ, կարծես այլընտրանք չի ձգեր տարատեսակ քաղաքական սաղրանքներու: Կը մնայ, որ մեր նորագոյն պատմութեան մէջ երկրորդ անգամ՝ երեսուն տարի ետք, նոյնպէս յաղթանակէ բանականութիւնը եւ պետական մտածողութիւնը:

«Լիպոյտ, ո՛չ, համոզուած ենք, որ այս երկրորդ զարթօնքը, որուն ակնատեսն ու մասնակիցը եղանք բոլորս, կ'ընթանայ բոլորովին այլ՝ սիրոյ եւ իրական համերաշխութեան ճամբայէն»: Ներկաները ծափահարութիւններով քանի մը անգամ ընդհատեցին բանախօսին խօսքը: Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Մեղրի Մարաշլեան (Չուլթակ), Ալիսիա Գասարճեան (դաշնամուր), Նուրբեյով «Քեյթ-Քեյթ» եւ «Այազեազ», Սեւան Մարաշլեան եւ Լուսին Գասարճեան՝ պար (Ուզունտարա), եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբը՝ «Հայ Ենք»: Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան անդամ Ընկ. Ալեքսան Գեօրգիւնեան յատուկ տեսակապով մանրամասն բացատրեց Հնչակեան կուսակցութեան քայլերգին իմաստը: Բեմ հրաւիրուեցաւ Դամասկոսի Հայոց թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Արմաշ Եպս. Նալպանտեանը ուղղելու իր պատգամը: Ան ներկայացուց Քսանները որպէս մարգարէներ, որոնք մարգարէացան այն միտքը եւ ունեցան այն տեսիլքը՝ հորիզոնին վրայ ողջունելու հօր, ազատ եւ ընկերվար Հայաստանը»:

Երեկոյի պաշտօնական բաժնի աւարտէն ետք, Հ.Մ.Մ.-ական պատանիներ ներկայացուցին կուսակցական երգեր, ընկերակցութեամբ Յակոբ Գասարճեանին՝ երգեհոնի վրայ:

Ձեռնարկը վերջ գտաւ յոտընկայս, Հնչակեան կուսակցութեան «Հեռաւոր Երկիր» քայլերգով եւ «Պահպանիչ»ով:

### Երկրաշարժի 30-րդ Տարելից

Շարունակուած էջ 6-էն

ցահանդէսների կազմակերպման եւ լուսաւորչական ծրագրերը, Երեւանի «Թէքէյեան կեդրոն» հիմնադրամը:

Յուցահանդէսի բացմանը ներկայ էին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Արկաղի Բալեանը, Սպիտակ համայնքի ղեկավար Գաբրիլ Սահակեանը,

«Թէքէյեան կեդրոն» հիմնադրամի տնօրէն Արմէն Ծուլիկեանը, PhotoPodium.com հարթակի հայաստանեան ներկայացուցիչ եւ ցուցահանդէսի համադրող Արմէն Ենգոյեանը, լուսանկարիչներ եւ այլք:

Յուցահանդէսը Թէքէյեան կեդրոնում կը գործի մինչեւ Յուլիսի 10-ը, այնուհետեւ կը տեղափոխուի Սպիտակ՝ մշտական ցուցադրութեան:

Ձեր Ծանուցումները Կատարեցէք «Մասիս» Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

www.massispost.com  
Daily News Updates  
www.massisweekly.com

### ՄԱՐԻ ՄԱՆԿՐԵԱՆ



ՄԱՐԻ ՄԱՆԿՐԵԱՆ  
Ծննդալիքային 1928-2019

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝ ՄԱՐԻ ՄԱՆԿՐԵԱՆԻ մահը որ պատահեցաւ Յունիս 23, 2019ին առաւօտեան ժամը 7:00ին:

Յուդարկաւորութեան եկեղեցւոյ կարգը տեղի պիտի ունենայ Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd, Pasadena, Յունիս 26ին կ.վ. Ժամը 2:00ին: Իսկ գերեզմանի կարգը Hollywood Hills-ի Forest Lawn գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝
- Ջաւահիր՝ Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Սալբի Մանկրեան եւ զաւակունք՝ Միրէյ, Ալին, Թանիա եւ Քարինա:
- Դուստրը՝ Անիթա էլմագեան
- Թոռնիկը՝ Տէր եւ Տիկ. Վաչէ եւ Սինթիա Սայեղ
- Թոռնիկը ձօ էլմագեան
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Անուշ Ծանթեան եւ համայն Մանկրեան, էլմասեան, Ծանթեան, Պէրպէրեան, Նիկողոսեան, Պուրճի, Պալեան, Հալաճեան, Սայեղ, Արոյեան եւ Զէյթունցեան ընտանիքներն ու հարազատները:
- Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Armenian Bone Marrow Association կամ St. Gregory Armenian Apostolic Church.

### ՅԱՒԱԿՅԱԿԱՆ

Լիբանանի մէջ արկածի պատճառով մահացած է Հ.Մ.Մ.ի լաւագոյն ֆութպոլիստներէն ընկեր Յովհաննէս Աւետիքեանը:

Ընկեր Յովհաննէս Աւետիքեան եղած է պարկեշտ ընկեր մը իր բնակարանէն ելած քրտնաբերութեամբ եւ սիրուած էր բոլոր զինք ճանչցողներէն:

Լոս Անճելոսի Հ.Մ.Մ.ի վարչութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ Լիբանանի Հ.Մ.Մ.ի վարչութեան ու մասնաւորաբար ընտանիքին անդամներուն եւ համայն հարազատներուն:

### Հնչակեան Քսան Անմահների Ոգու Խոյեանքին

Շարունակուած էջ 15-էն

դէպի կախաղաններ, հանգիստ ու անվրդով կանգնել էին օղակների տակ: Հայեացքներն էին յառել երկնակամարում վառուող աստղերին: Նրանք խնդրել էին Տէր Գալուստին սուրբ հաղորդ ստանալ, հայոց հաւատքի մասունքով իրենց հոգիները պսակել Հայաստան աշխարհի ոգեղէն խորհուրդով: Իրենք էլ, որպէս գաղափարի առաքելներ երկրադաժութեամբ համբուրել խաչը: Օննիկ թոփուղեան խօսքը Տէր Գալուստին ուղղելով ասել էր՝ «Տէր Հայր, տուր այս չոր թաշկինակը մօրս եւ ըսէ, որ այն երբեք թրջուած չէ արցունքով»:

Առաջինը կախաղանի օղակին մօտեցել էր Փարամազը իր կտակի թուղթն էլ յանձնել՝ «Հայր մեռնում է կաթիլ առ կաթիլ: Փոխանակ կաթիլ առ կաթիլ մեռնելու եւ անհանալու, հայր մի անգամ եւս պիտի մեռնի, որ հայր ապրի: Դուք մեր մարմինները կրնաք կախել, իսկ մեր գաղափարը, ո՛չ: Հոն ուր կախաղաններն են ճօճուած, ազատութիւնն է ման գալիս, հոն ուր մեռելներն են ննջում յարութիւնն է մօտալուտ: Մեր գողգոթանները Նազովրեցիի Գողգոթային աւելի վսեմ եղան, մեր խաչը Օծեալի խաչէն աւելի ծանրագոյնը եղաւ, բայց մեր յղթանակները գերագոյնը պիտի ըլլան յղթանակներուն»:

րուն»: Նրա վերջին կոչականն էր՝ «Դուք վաղը պիտի տեսնէք արեւելքի հորիզոնի վրայ Սոցիալիստական Հայաստանը»:

Տօքթոր Պէննէ յախուռն կանչով ազդարարել «Դուք մեզ քսաններին կը կախէք, բայց իմացէ՛ք քսան հազարներ պիտի հետեւին մեզի»:

Իրենց տրուած ձեռնակ շապիկներն էին հագել, հրեշտակների թեւերին բազմած ձեռնակ հագուստով, իրնց յաւերժութեան ճամբաների երթով թռչելու իրենց Հայկ Նահապետի համաստեղութիւն: Տէր Գալուստը իր պարտականութիւնը կատարելուց յետոյ կանգնած մնացել կառափնատեղիում հոգիով մարտիրոսանալու նրանց հետ: Ապա ընկերացել է նահատակների դիմերին, գնացել Գուժ Գաբու գերեզմանատուն կատարելու նաեւ նրանց թաղման կարգը: Անմիջապէս գնացել Պատրիարքարան, Ջաւէն Պատրիարքին տեղեկացնելու եղեռնագործութեան մանրամասները: Ահա նրանք՝ Փարամազ, Երուանդ Թօփուղեան, Մինաս Քէշիշեան, Յակոբ Պասմաճեան, Տօքթ. Պէննէ Հրանդ Եկաւեան, Վահան Պոյաճեան, Աբրահամ Մուրատեան, Վանիկ, Թովմաս Թովմասեան, Գարեգին Պողոսեան, Երեմեա Մանանեան, Արամ Աչըքաչեան, Յակոբ Գազագեան, Պողոս Պողոսեան, Արմենակ, Մկրտիչ Երէցեան, Յովհաննէս Եղիազարեան, Գառնիկ

Պոյաճեան, Պրիլիսցի Պետրով:

Տէր Գալուստ Պողոսեանը, ուղեկցող նամակով էջմիածնի վեհափառ Հայրապետին էր ուղարկել այն խաչը, որ քսանները համբուրել էին կախաղան բարձրանալուց առաջ: Այն տուփը, որ պարունակում էր խաչը պահպանուած է վեհափառի անձնական պահարանում: Այդ խաչը դեռ տաք է քսանների շրթների ջերմից, եթէ հոգու երկիւղած ակներով նայէիք նրան, այնտեղից պիտի յառնէր նրանց արեւափառ լոյսը, իսկ եթէ անհացած նայէիք պիտի տեսնէիք աստղային ժպիտներով քսանների արեւոտ դէմքերը:

Ես, Մոուսաների լեռան շէնի տարեց այր, գիւղի լաճ դարձած գնում Եօղուտուգի վերի Թաղի Հնչակեանների ակումբ, ինչ աղուոր է երեւակայութեան ճախրանքով տեսնել այն բոլորը որը անցել է: Մտնում բաց դռնով, դիմացի պատին լոյս է վառուած, նահատակուած քսան կախաղանների համախումբ ու առանձին պատկերներն են: Նրանց ազատութեան պայքարի լոյսը հասել էր արի մարդկանց շէներ, կուռի տարել նրանց, սպաննել դուշմանի յոխորտանք, պատուել իրենց լեռներ եկած զինուորների սրտեր: Արի մարդկանց պայքարի ոգին էր չաղթանակել: Դրօշակ էր քսանների գլխավերեւ, փշրուած շղթաները կարծես դեռ օրօրուում էին քաջերի զարկից: Լեռնականի հպարտ սրտով պատմում էին, որ հեռու երկրի հնչակեան մտաւորական, ազգային յանդուգն գործիչ՝ Տիրուհին էր Մուսա Լեռ այցելութեան ատեն քսանների պատկերները ու խոշոր գունաւոր դրօշակը նուիրել շէնի Հնչակեան ակումբին: Եօղուտուգի գիւղի Հնչակեան ղեկավարներ՝ Յովհաննէս (Վէնիս) եւ Յակոբ եղբայրներն էին նրան այցելութեան հրաւիրել:

Քսանների դաւանած սոցիալիստական ու յեղափոխական գաղափարները նաեւ դաւանել են, իրենց մտքերը պայծառացրած ծագումով թուրք մարդիկ: Փարամազին նուիրուած գիրք են հրատարակել: Հաւաստել են, որ Փարամազն ու քսան կախաղանները երկրում առաջինը սոցիալիստական սերմեր են ցանել եւ որ նրանք երկրի սոցիալիստների ու աշխարհի համայն յեղափոխականների հերոսներն են, իրենք նրանց գաղափարախօսութեան ջահակիրներն են, եւ որ իրենց համախմբում է «Փարամազի ու քսանների աշխարհամտածելակերպի պայքարը» եւ որ ամէն տարի նրանց նահատակութիւնն են ոգեկոչում:

Քսանները, ազգին փրկելու

կուռին էին գնացել, թողած գործ, հայրենի հող, կին ու զաւակ, հայր ու մայր փարել էին ազգային ազատագրական պայքարի գաղափարական ոգու հողմերին, նետուել նրա յորձանուտ, աշխարհին աւետելու, որ Արմին-Հայ ցեղը գիտէ ազատութեան համար այրուել: Նրանց ճշմարտութեանը դաւեց արիական արիւնով չճառագած «սեւ հոգիով» մարդը, նրանց մեղադրեցին կղերականներ, արեւոտ մտքերով մտաւորական այրեր հաւատացին թուրքի ժպիտին: Յեղի քսան առաքելները նրանց ասացին մի խաբուէք այդ հրէշածին մարդկանց ժպիտին, ահա նրանց իսկ ընդունած ցեղը բնաջնջելու որոշումը: Ափսոս եղաւ արարչական ցեղին, մի ոհմակի բնաջնջումը պիտի խափանէր ցեղի, երկրի բնաջնջումը, Արմինա-Հայաստան երկրի քանդումը: Նորէն յառնեց ցեղի արարչական ոգին, ստիպեց աշխարհին ընդունել, որ թուրքը ցեղ է սպաննել իրենց Արմինա դրախտիկ երկրում, պահանջում որ մեղաց կանչէր, հատուցէր գործած ոճիրը...:

Եթէ դուք բարձրանալիք Տարած-Վասպուրական աշխարհի երկնակամարին հպած Նեմրուժ լեռան գագաթ, պիտի ապշէիք տեսնելով ոսկէփայլ լուսաշող մի նոր աստղաբոյլ, հաշուէիք նրա աստղերը, առաջին մեծութեան քսան աստղեր գիշերներին այնտեղ լոյս են ճառագում: Ազգային գիտակցութեան, ազգի պայքարի անձնագրութեանը գնալու ցեղին սրտից ծաղկած լոյսն է այն: Այդ բոցավառ աստղերի երկնակամարում փայլատակող լոյսի շողերում Փարամազի, Պէննի, Վանիկի ու բոլոր քսանների ստուերներն են ժպտում: Օղակ պարաններով շնչահեղձ արեցին ազնուագարմ մտքի քսան առաքելների, մարեցին միտք, մարեցին երեւակայութեան ճախրանքի թուրք, մարեցին սրտերի զարկեր, սակայն անցոր եղան մարելու նրանց հոգիներից ճառագած քաջ Նահապետի ոգու ջահերի լոյսը, Արմինա-Հայաստան անկախ երկրում վառուող արարչութեան լոյսը:

Հարիւր չորս տարիներ... ամէն Յունիսի 15-ին, Արմին-Հայերը քսան ընկերվար քաջերի սխրանքի գաղափարի լոյսը փառաբանում, յուշատօներ կատարում, ափսոսում նրանց մահը, եւ դեռ նրանք ինչէր չէին անելու...: Յանուն ցեղի յարատեւման պայքարի, յանուն արեւելքի հորիզոնին փայլող ազատ Հայաստանի, յանուն քսանների աստղաբոյլի լոյսի յարատեւութեանը՝ հայոց երգահանների համանուագներն են, հազար թմբուկ զարկեն:

### Հայկական Ցեղասպանութենէն Ազատուած

Շարունակուած էջ 16-էն

Մարիա Ճագոպսըն չէր կրնար անտարբեր մնալ ի տես աղիտալի կացութեան, ինչպիսին ցեղասպանութիւնն էր: «Մամա» չի կեանքը լաւապէս վաւերագրուած է՝ «Դանիացի Միսիոնարուհիի մը Օրագրութիւնները» անուն իր հատորին մէջ և իր պատգամը լայն ու խորը կերպով կը փոխանցուի այն մանուկներու միջոցաւ, որոնց ծառայեց ինք: Մարիա Ճագոպսըն այսօր կը շարունակուի ըլլալ հզօր ժառանգութիւն մը նուիրումի, և կրնայ օգտակար ըլլալ ապագայ աղէտներու կանխագիծման»:

համով ճաշը, զոր կը հովանաւորէր բարերար՝ Տոքթ. Յակոբ Այնթապլեան: Յարգելի Տօքթորը խօսք առնելով, իր կարգին պանծացուց դանիացի ազնուական ժողովուրդի գաւակ՝ Մարիա Ճագոպսընի անմնացորդ նուիրումը հայ որբերուն, որուն անունը յաւերժօրէն պիտի մնայ հայ ժողովուրդի տարեգրութեանց մէջ: Խօսք առին նաեւ ներկայներէն ոմանք:

Յայտագրի աւարտին, եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Ներկաները վայելցին Մաշտոց Գոյնճի տիկնանց միութեան կողմէ պատրաստուած

Դուկոս Կարպիս Տէր-Եղիայեանի՝ Մաշտոց Գոյնճի տիկնանց միութեան, Տօքթ. Մարգիտ Թոփալեանի «Երեւան» տպարանին, Տօքթ. Այնթապլեանին և ներկաներուն ուղղուած շնորհակալական խօսքերով վերջ գտաւ՝ Եղեռնի 104րդ տարելիցին առթիւ Աստուծոյ, մարդկութեան և հայութեան նուիրելի գերնտիր ճառայ «Մամա» չին՝ Մարիա Ճագոպսընի պայծառ յիշատակին նուիրուած յոյժ յիշատակելի ոգեկոչական հանդիսութիւնը:

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Ամերիկայի Գալաթի Պրագիլիան, Վենեզուելան, Գոլումբիան Ու Արժենտինան Քառորդ Եզրափակիչում են

Պրագիլիայում ընթացող ֆուտպոլի Ամերիկայի գալաթի խաղարկուծի խմբային փուլի հանդիպումներն աւարտեցին Ա խմբում ընդգրկուած խումբերը: Երրորդ տուրում Պրագիլիայի հաւաքականը մրցեց Պերուի թիմի հետ եւ ոչ մի շանս չտուեց՝ 5:0:



Հաշիւն արդէն 12-րդ ըրոպէին բացեց Մադրիդի «Ռեալի» պաշտպան Կագեմիրոն: Գոլով եւ կոլային փոխանցմամբ աչքի ընկաւ անգլիական «Լիվերպոլի» յարձակուող Ռոբերտո Ֆիրմինոն: Պրագիլական «Գրեմիոյի» յարձակուող էվերտոնը հաշիւը դարձրեց 3:0, պրագիլացիների չորրորդ կոլը խփեց ֆրանսական ՊՍժ-ի պաշտպան Դանի Ալվեսը, 5-րդը՝ Լոնտոնի «Չելսիի» յարձակուող Վիլիանը: Աւելացուած ժամանակում էլ 11 մեթրանոցը դիպուկ իրացնել չկարողացաւ «Մանչեսթեր Սիթիի» յարձակուող Գաբրիէլ ժեզուսը:

Պրագիլիան 7 միաւորով գրաւեց առաջին տեղը եւ դուրս եկաւ քառորդ եզրափակիչ:

Խմբի միւս խաղում Վենեզուելայի հաւաքականը 3:1 հաշուով առաւելութեան հասաւ Բոլիվիայի թիմի նկատմամբ:

Իտալական «Ուդինզեի» յարձակուող Դարբին Մաչիսի դուբլը նպաստեց Վենեզուելային յաղթանակին: Թիմը 5 միաւորով գրաւեց երկրորդ տեղը եւ նոյնպէս նուաճեց քառորդ եզրափակիչի ուղեգիր:

Գոլումբիայի եւ Արժենտինայի հաւաքականները եւս նուաճեցին քառորդ եզրափակիչի ուղեգրեր:

Արժենթինայի հաւաքականը 2:0 հաշուով առաւելութեան հասաւ Քաթարի թիմի նկատմամբ: Աչքի ընկան Լաուտարո Մարտինեսն ու Սերխիո Ագուերոն:

Գոլումպիայի հաւաքականն ուժեղ էր Պարագուայի թիմից՝ 1:0:

Գոլումպիան երեք յաղթանակից չետոյ Ե խմբում գրաւեց առաջին տեղը, Արժենթինան երկրորդն է՝ 4 միաւորով:

Աւելի վաղ քառորդ եզրափակիչի ուղեգրեր նուաճել էին Պրագիլիան, Վենեզուելան ու Չիլին:

## ՖԻՖԱ-ն Իրանից Պահանջել է Կանանց Թոյլ Տալ Ներկայ Լինել Տղամարդկանց Թիմերի Խաղերին

ՖԻՖԱ-ի նախագահ Ջանի Ինֆանտինոն Իրանի իշխանութիւնից պահանջել է կատարել խոստումը եւ թոյլ տալ կանանց ներկայ լինել տղամարդկանց թիմերի մասնակցութեամբ հանդիպումներին:

«Յաւօք, Իրանը չի կատարել 2018թ. Մարտին տուած խոստումը: Իրանի ֆուտպոլի ֆեդերացիայի ղեկավարութեանն ու պետական ղեկավարութեանը յորդորում եմ Յուլիսի 15-ից ոչ ուշ միջոցներ ձեռնարկել եւ Իրանի բոլոր կին քաղաքացիներին եւ այդ երկիր այցելած օտարերկրացի կանանց թոյլ տալ ձեռք բերել 2022թ. աշխարհի առաջնութեան ընտրական հանդիպումների տոմսեր եւ ներկայ լինել խաղերին, որոնք մեկնարկում են 2019թ. Սեպտեմբերին», - Ինֆանտինոյի խօսքը մէջբերում է AP-ն:

Իրանում կանանց արգելուած է այցելել տղամարդկանց մասնակցութեամբ մարզական մրցումներ 1979թ. իսլամական յեղափոխութիւնից յետոյ:

## ԵԱ. Լիովա Գեորգեանը՝ Ոսկէ Մետալակիր



Իտալիայում անցկացուող ազատ ոճի ըմբշամարտի Եւրոպայի առաջնութիւնում Հայաստանի ներկայացուցիչ Լիովա Գեորգեանը նուաճեց յաղթողի կոչումը: 92 կգ քաշային կարգի եզրափակիչում հայ ըմբիշը 6:3 հաշուով առաւելութեան հասաւ ռուսաստանցի Իսլամ Կարտոեւի նկատմամբ:

60 կգ քաշային կարգի եզրափակիչում Գենիկ Ասատրեանը դարձել է արծաթէ, 71 կգ քաշային Մենուա Յարիբեկեանը՝ պրոնզէ մետալակիր:

## Սամբիստ Տիգրան Կիրակոսեանը՝ Եւրոպական Խաղերի Ախոյեան

Հայաստանն առաջին ոսկէ մետալը նուաճեց Մինսկում տեղի ունեցող Եւրոպական Խաղերում:



Սամբոյի մրցաշարում 52 կգ քաշային Տիգրան Կիրակոսեանը եզրափակիչ մարտում 4:0 հաշուով վստահ յաղթեց Ատրպէյճանի ներկայացուցիչ Ադասիֆ Սամադովին եւ արժանացաւ ամենաբարձր պարգևին:

Արսէն Ղազարեանը (74 կգ) պրոնզէ մետալ նուաճեց: Այսպիսով, Եւրոպական Խաղերում Հայաստանը ներկայացնող 6 սամբիստները 3 մետալ նուաճեցին ( Արծաթէ մետալակիր էր դարձել Դաւիթ Գրիգորեանը (82 կգ):

## Ափրիկէի Գալաթի. Եգիպտոսը Սալահի Յետ Մեկնարկեց Յաղթանակով

Եգիպտոսում մեկնարկեց ֆուտպոլի Ափրիկէի ազգերի գալաթի խաղարկութիւնը: Գահիրէում տեղի ունեցած բացման խաղում Եգիպտոսի հաւաքականը մեքսիկացի Խավիեր Ագիրէի գլխաւորութեամբ մրցեց Չիմբաբուէի հաւաքականի հետ եւ առաւելութեան հասաւ նուազագոյն հաշուով:

Ամբողջ հանդիպմանը մասնակցեց նաեւ «Լիվերպոլի» առաջատարներից, եգիպտացի յարձակվող Մոհամեդ Սալահը:

Ա խմբում են ընդգրկուած նաեւ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետութեան եւ Ուգանդայի հաւաքականները:

## Իբրահիմովիչ. Ես լեզունդ եմ

Յարձակուող Չլատան Իբրահիմովիչը պատմել է իր մասին, եւ թէ ինչպէս են գործերը ամերիկեան առաջնութիւնում, որտեղ արդէն 2-րդ մրցաշրջանն է անցկացնում: «Լոս-Անճելոս Գելեքսիի» ֆուտպոլիստը կարծում է, որ ինքը լեզունդ է, իսկ ֆուտպոլում ուրիշ Չլատան հաստատ չկայ.



- Մի՛ գարմացէք, ես արդէն լեզունդ եմ: Այս մրցաշրջանում այնպիսի բաներ կը տեսնէք, որ դեռ չէք տեսել ՄԼՍ-ում իմ առաջին մրցաշրջանի ժամանակ: Նախորդի հետ համեմատած՝ մենք աճել ենք, այնպէս որ տիտղոսակիր դառնալու համար բոլոր խաղերում յաղթելը կարեւոր է: Ես ֆաւորիտ չեմ տեսնում, դրա համար էլ այդքան զեղեցիկ է ՄԼՍ-ը: Ես իւրաքանչիւր մրցակցի համարում եմ ամենամեծ սպառնալիքը: Շատ լաւ ֆուտպոլիստներ կան, բայց չկայ մէկը, որը կը համեմատուի ինձ հետ, - յայտարարել է Իբրահիմովիչը DAZN-ի հետ զրոյցի ժամանակ:

**Homenmen Championship Games Schedule**



**HOMENMEN ANGEL VS SC Croat S.P.**  
SUNDAY JUNE 30, 2019 11:50PM  
GRIFFITH PARK

**HOMENMEN SAHARA VS Seismic SC**  
SUNDAY JUNE 30, 2019 1:45PM  
GRIFFITH PARK

**GRIFFITH PARK SOCCER FIELD:**  
3401 Riverside Drive, Los Angeles, CA 90027